ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1(5)

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 1 (5), 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Համակարգային փոփոխություններ 3

Իգոր Բաղիրյան
Ճգնաժամից դուրս գալու ռազմավարություն 13

Սամվել Մարտիրոսյան
Տեղեկատվական պատերազմ Հայաստանի դեմ.
2008թ. որոշ արդյունքներ 18

Ռուբեն Մելքոնյան
Էրզենեքոնի հայկական ուղղվածության շուրջ 25

Արեստակես Միմավորյան
Հայ կաթոլիկ համայնքներն այսօր 34

Կարեն Վերանյան
ԱՄՆ Կոնգրեսի «Սովորական սպառազինության մատակարարումները զարգացող երկրներին 2000-2007թթ.» զեկույցը 40

Հրաչյա Արզումանյան
Ռազմավարություն 52

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գագիկ Հարությունյան

Այն, ինչ ներկայումս կատարվում է աշխարհում, փորձագիտական հանրությունում գրեթե միանշանակ բնութագրվում է որպես համակարգային ճգնաժամ: Նման ձևակերպումն արդարացված է, քանի որ կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք ուղեկցվում են տնտեսական անկումով, ահաբեկչության և քաղաքական անկայունության նոր օջախների ստեղծմամբ:

Բազմաբևեռ աշխարհի մարտահրավերները

Քաղաքական հարթությունում գլխավոր գործընթացը բազմաբևեռ աշխարհակարգի կայացումն է: Այդ նոր համակարգի աշխարհաքաղաքական ուրվագծերն անորոշ են, իսկ խաղի կանոնները դեռևս մշակված չեն: Դա միջազգային հարաբերությունների սուբյեկտներին թելադրում է ճշգրտել իրենց ընթացիկ քաղաքականությունը և փորձել սկզբունքորեն նոր ռազմավարություն մշակել: Վերոնշյալ միտումները հասկանալի են. նախկինում գերակայող Միացյալ Նահանգների քաղաքական փիլիսոփայությունը սկսել էին ադեկվատ ընկալել և ըստ այդմ գործել շատերը: Այսօր գլոբալ ուժի կենտրոնները մի քանիսն են, նրանց միջև եղած հակասությունները ենթարկվում են «Սառը պատերազմի» տրամաբանությանը և ընդունել են ռազմական (լոկալ պատերազմներ), դիվանագիտական ու տեղեկատվական հակամարտությունների տեսք: Ներկայիս տնտեսական ճգնաժամը, ըստ էության, նույնպես «Սառը պատերազմի» աշխարհատնտեսական բաղադրիչ է. էներգակիրների և այլ բնական պաշարների գների անկումը, Ռուսաստան – Ուկրաինա «գազային պատերազմը», արտադրական հզորությունների կրճատումը և նմանատիպ այլ երևույթներ միանշանակորեն առավել շատ հարվածում են Ռուսաստանին, Չինաստանին, ինչը հիշեցնում է Առաջին սառը պատերազմի տարիներին ԱՄՆ կիրառած տնտեսական պայքարը «սոցճամբարի» դեմ:

Հատկանշական է, որ այսօր հակասությունները խորանում են ոչ միայն ավանդական մրցակիցների միջև (ԱՄՆ-ՌԴ, ԱՄՆ-ՉԺՀ, ԱՄՆ–իսլամական երկրներ), այլև, քողարկված ձևով, նաև ԵՄ-ի և ԱՄՆ-ի միջև: Օրինակ, 2008-ի հուլիսին Իռլանդիայում տեղի ունեցած հանրաքվեում «Լիսաբոնյան համաձայնագրի» (այն պետք է փոխարիներ նախկինում չընդունված «եվրասահմանադրությանը») մերժումը ԵՄ պաշտոնական շրջանակները պայմանավորում են Պենտագոնի և ԿՀՎ գործունեությամբ (այդ խնդրի կապակցությամբ կատարվեց անգամ ոչ պաշտոնական հետաքննություն)[1]:

Ստեղծված նոր իրադրությունում քաղաքական զարգացումներին տրված գնահատականները տարաբնույթ են ու իրարամերժ: Սակայն մեկ հարցում քաղաքական-վերլուծաբանական հանրությունը կարծես թե համերաշխ է. բազմաբևեռ աշխարհակարգի կայացումը մեծ վտանգներ է պարունակում, և այդ համատեքստում նոր պատերազմների ծագման հավանականությունն անխուսափելիորեն աճելու է:

Ապագայի հոռետես սցենարներ

Քաղաքական կանխատեսումներ անելու մշակույթն առավել զարգացած է ԱՄՆ-ում, և այդ առումով ուշագրավ է 2008-ին ամերիկյան հետախուզական ծառայությունների՝ Սենատին ուղղված զեկույցը[2], որտեղ, նկատի ունենալով Հյուսիսային Կորեան և Իրանը, նշվում են զանգվածային ոչնչացման զենքի *(ՋՈՋ)* տարածման հետ կապված վտանգները: Ուշագրավ է, որ Իրաքում, Աֆղանստանում և Պակիստանում ստեղծված բարդ իրադրությունը դիտարկելուց բացի, զեկույցում տեղ են գտել Եվրոպայում հնարավոր քաղաքական անկայունության առաջացման հիմնախնդիրները *(տե՛ս վերը):* Մեկ այլ ծառայության՝ Ներքին անվտանգության պատրաստած զեկուցագրում իրատեսական է համարվում, որ մոտակա հինգ տարիներին Միացյալ Նահանգները կարող է ենթարկվել ահաբեկչական հարձակման *ՋՈՋ* կիրառմամբ[3]: Առանձին վերլուծության կարիք ունի նաև ԱՄՆ Հետախուզության ազգային խորհրդի (*NIC) «Գլոբալ միտումներ 2025»* զեկույցը[4], որը նույնպես տագնապալի երանգներ է պարունակում:

---

[1] Տե՛ս, օրինակ, http://www.earthtimes.org/articles/show/234077,report-reveals-more-about-irish-lisbon-treaty-no-campaign-funding.html

[2] http://www.washprofile.org/ru/node/7830

[3] Homeland Security forecasts 5-year terror threats, http://news.yahoo.com/s/ap/20081225/ap_on_go_ca_st_pe/homeland_threat_forecast

[4] "Global trends 2025", A Transformed World, *http://www.dni.gov/nic/PDF_2025/2025_Global_-Trends_Final_Report.pdf*

Ռուսաստանյան վերլուծաբանները նույնպես լավատես չեն[1]: Ոմանք հակված են այն մտքին, թե պատերազմական իրավիճակը շարունակական բնույթ է կրում արդեն 9/11-ից հետո, և նման մոտեցման հետ դժվար է չհամաձայնել: Մյուսները կարծում են, թե ստեղծված ճգնաժամը կարող է հանգեցնել լայնածավալ, միջուկային պատերազմի: Հատկանշական է, որ 2008-ին ԱՄՆ-ը և Ռուսաստանը վերանայել են իրենց ռազմական դոկտրինները, ռազմական բարեփոխումներ են իրագործում ԵՄ-ը, Մեծ Բրիտանիան և Չինաստանը[2]:

Դիտարկելով հետազոտական կենտրոնների և առանձին փորձագետների կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել, որ դրանք պարունակում են տեղեկատվական–քարոզչական ազդեցության տարր և այդպիսով մասամբ հետապնդում են մարտավարական նպատակներ: Հայտնի է նաև, որ նման կանխատեսումները որոշ չափով ուղղորդում են ապագայի հնարավոր զարգացումները, և, ինչը ամենակարևորն է, օբյեկտիվորեն բավական հիմնավորված է. ի տարբերություն երկբևեռ համակարգի (ԱՄՆ-ԽՍՀՄ), բազմաբևեռ աշխարհում դեռևս չեն ձևավորվել «զսպման քաղաքականության» մեխանիզմները, բացակայում են ստրատեգիական զենքի սահմանափակման շուրջ պայմանագրերը և այլն: Այս ամենը մեծացնում է լայնածավալ, գուցե անգամ՝ միջուկային պատերազմի հավանականությունը:

Նախագահ Ջորջ Բուշի «աշխարհաքաղաքական ժառանգությունը» – Մերձավոր և Միջին Արևելք (ՄՄԱ)

ՋՈՋ կիրառմամբ պատերազմի համատեքստում նախորդ տարիներին (հատկապես՝ 2003-2007թթ.) «ռիսկային» տարածաշրջան էր համարվում *ՄՄԱ-ն*, որտեղ Իրանի միջուկային ծրագրի և իրաքյան զարգացումների առիթով ծայրահեղ սրվել էին Միացյալ Նահանգների և նրա դաշնակից Իսրայելի հարաբերություններն Իրանի հետ: Ներկայումս (չնայած 2008թ. դեկտեմբերին սկսված հերթական իսրայելա–պաղեստինյան զինված

[1] *Константин Симонов,* “Россия идет на войну”, Политический класс, #9(45), с. 61, 2008; *Шамсудин Мамаев,* “Кто победит в четвертой мировой войне*”, http://www.eurasianhome. org/xml/t/print/xml?lang=ru&nic=opinion&pid=1299; Михаил Леонтьев:* “Россия-ядро нового мира”, *http://inosmi.ru/print/246253.html,*

[2] *Washington Post* обнаружила секретную стратегию Пентагона, http://lenta.ru/news/2008/07/31/enemy/_Printed.htm; Пентагон принял директиву о подготовке к ассиметричной войне; http://lenta.ru./news/2008/12/04/irregular; *Владимир Соловьев,* «Верные враги», http://www.kommersant.ru/doc.aspx?DocsID=1099153; Министерство обороны России готовится воевать в трех локальных конфликтах, http://regnum.ru/news/1102601.html; Евросоюз пытается выработать концепцию объединенных вооруженных сил, http://www.apn.ru/news/print/20480.htm

հակամարտությանը) տպավորությունն այնպիսին է, որ կողմերը ձեռք են բերել ոչ պաշտոնական պայմանավորվածություններ, ինչը նկատելիորեն «պարպել» է անհանդուրժողականության մթնոլորտը և այդպիսով նվազեցրել միջուկային պատերազմի վտանգը տարածաշրջանում: Դրա մասին է վկայում «*Հեզբոլլահի*» պասիվ կեցվածքը ներկայիս հակամարտությունում և մասնավորապես այն փաստը, որ ս.թ. հունվարի 11-ին այաթոլլա Ալի Խամենեին իր հրովարտակով («ֆաթհով») արգելեց Իրանի քաղաքացիներին մասնակցել ընթացող պատերազմին և ահաբեկչություններ կատարել Իսրայելի դեմ:

Հատկանշական է, որ իսրայելա–պաղեստինյան հակամարտության ընթացքում առավել արմատական դիրքորոշում որդեգրեց Թուրքիան: Վարչապետ Էրդողանը, բարձրացնելով ՄԱԿ-ում Իսրայելի անդամակցության կասեցման հարցը, փորձեց «պապից ավելի կաթոլիկ» երևալ և այդպիսով հավակնել իսլամական աշխարհի առաջատարի կարգավիճակին: Մինչդեռ թուրք-իսրայելական հակասությունների հիմնական պատճառն իրաքյան պատերազմի հետևանքով ակտուալացած քրդական գործոնն, է և այդ խնդրում թուրքական մոտեցումներն ավելի մոտ են այդ ուղղությամբ Իրանի վարած քաղաքականությանը: Ի լրումն, տարածաշրջանում ամերիկյան ազդեցության թուլացումը, ներքին ոլորտում ծայր առած «ինքնության ճգնաժամը» և այլ հիմնախնդիրներ ստիպում են Թուրքիային Եվրասիայում ռազմավարական նոր գործընկերներ փնտրել, որոնց շարքում, հնարավոր է, տեղ զբաղեցնի նաև Ռուսաստանը: Ակնհայտ է նաև, որ այդ տրամաբանությանն են ենթարկվում նաև Հայաստանի նկատմամբ հայտնի միտումները: Բոլոր պարագաներում այսօր Թուրքիայի և Իսրայելի ազգային շահերը սկզբունքորեն չեն համընկնում, ու այդ երկրների միջև նախկին ռազմավարական համագործակցությունը, ըստ ամենայնի, մնացել է անցյալում[1]:

Ելնելով ներկայացված միտումներից՝ կարելի է սպասել, որ ապագայում *ՄՄԱ*-ում ԱՄՆ հենակետերը կհանդիսանան Իսրայելը, որոշակի վերապահություններով՝ Իրանը (այս կապակցությամբ պետք է հիշել, որ նախկինում Իսրայել–Իրան և ԱՄՆ-Իրան հարաբերությունները բավական սերտ են եղել) և պետականին մոտ կարգավիճակ ունեցող քրդական կազմավորումները: Դասական ռազմավարության տեսանկյունից այդ սխեման օպտիմալ է ամերիկացիների համար. կողմերի հակասություններն առավել կկարևորեն ԱՄՆ դերակատարումը: Այս խնդիրներում պետք է հատուկ առանձնացնել

[1] Стратегического союза между Анкарой и Тель-Авивом уже нет: армянский аналитик, http://www.regnum.ru/news/armenia/1111722.html

նախագահ Ջորջ Բուշի ռազմավարությունը, որը ոչ միայն վերաձևեց այդ առանցքային տարածաշրջանը, այլև *ՄՄՍ* քաղաքական բովանդակությունը հնարավորինս համապատասխանեցրեց Միացյալ Նահանգների և Իսրայելի ազգային շահերին: Կարելի է փաստել, որ նախագահ Բուշը, կիրառելով ուժային մեթոդներ և հաշվի չառնելով իր անձնական վարկանիշի կորուստները, հսկայական «աշխարհաքաղաքական կապիտալ» թողեց իր հետնորդին:

Նախագահ Բարաք Օբաման՝ «լայնածավալ PR նախագիծ»

Դեռևս 2007-ին ամերիկյան փորձագիտական կանխատեսումներում «ուրվագծվել» էին համեմատաբար «խաղաղ» միտումները *ՄՄՍ*-ում[1]: Նախանշվում էր նաև ԱՄՆ քաղաքականության փոփոխությունը 2008թ. նախագահական ընտրություններից հետո. արդեն իսկ ենթադրվում էր, որ դրանց արդյունքում «նեոկոնսերվատորներին» պետք է փոխարինեին դեմոկրատները: Այդ զեկույցներում շեշտվում էր, որ Միացյալ Նահանգների «նահանջի» պայմաններում նախահարձակ (պրևենտիվ) ռազմական գործողությունների կիրառման դոկտրինը պետք է փոխարինվեր «փափուկ ուժի» ռազմավարությամբ:

Սակայն այդ կանխատեսումներին և նախընտրական գործընթացներին հետևող արտաքին դիտորդների համար դժվար էր պատկերացնել սենատոր Օբամայի տպավորիչ հաղթանակը և գնահատել այդ հաղթանակի ազդեցությունը ԱՄՆ-ի ու գլոբալ քաղաքականության վրա: Անշուշտ, դեռ վաղ է խոսել նորընտիր նախագահի քաղաքական ձեռքբերումների մասին, սակայն ակնհայտ է, որ ԱՄՆ քաղաքական իսթեբլիշմենթն իրագործեց մի լայնածավալ *PR* նախագիծ, որը պայմանականորեն կարելի է անվանել *Բարաք Օբաման:* Մեկնաբանները միահամուռ են այն հարցում, թե նորընտիր նախագահի առաքելությունը միջազգային հանրությունում Միացյալ Նահանգների ծայր աստիճան ցածր վարկանիշի բարձրացումն է, և նման մոտեցման հետ դժվար է չհամաձայնել: Զարմանալի չէ, որ նոր նախագահի առաջին հրամանագրով պետք է փակվի տխրահռչակ Գուանտանամոյի բանտը: Սպասվում է նաև սեղմ ժամկետներում ամերիկյան զինուժի *(ԶՈՒ)* դուրսբերումն Իրաքից: Սակայն նկատենք, որ այս վերջին քայլը, ըստ ամենայնի, պետք է որ շարունակի Բուշի վարչակազմի «մեծ ստրատեգիան», քանի որ ամերիկացիների կողմից Իրաքի գրավումը, ըստ առկա փաստերի և վարկածների, առաջին հերթին նպատակ ուներ «ղեկավարվող

[1] *Տե՛ս, մասնավորապես, Гагик Тер – Арутюнянц,* Новые геополитические реалии, *Голос Армении,* #2(19652), 17.01.2008; http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=962

քաոս» ստեղծել ու մասնատել այդ երկիրը: Ներկայիս իրողությունը Իրաքում վկայում է այն մասին, որ այդ խնդրի մի զգալի մասը կատարվել է. Իրաքը բաժանված է սուննի, շիա և քրդական հատվածների, իսկ երկրում անիշխանություն է տիրում. օկուպացիայի տարիներին Իրաքում տարաբնույթ բռնությունների հետևանքով զոհվել է մինչև 500 հազար տեղաբնակ: Միևնույն ժամանակ, ամերիկյան ԶՈՒ առկայությունը որոշ չափով սահմանափակում է ահաբեկչությունը և միջդավանական բախումները, և կարելի է ենթադրել, որ օկուպացիոն զորքերի դուրսբերումը պետք է որ նպաստի ահաբեկչության աճին այդ երկրում: Այսինքն՝ ԱՄՆ ներկայիս վարչակազմը փորձելու է շարունակել իր նախորդի քաղաքականությունը, սակայն հաղորդելու է դրան միջազգային և սեփական հանրության կողմից ավելի «ընդունելի» տեսք և ձևաչափ: Կարծում ենք, որ նման մոտեցում կկիրառվի նաև ամերիկյան քաղաքականության այլ ուղղություններում:

Բոլոր պարագաներում պետք է փաստել, որ «միջուկային շեշտադրումները» *ՄՄԱ*-ում նկատելի մեղմվել են: Ներկայումս միջուկային պատերազմի խնդիրն առավել ակտուալացել է Հնդկաստան-Պակիստան հարաբերությունների հարթությունում: Ինչպես ժամանակին դիպուկ նշել է մի քաղաքական մեկնաբան, «եթե Սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ և ԱՄՆ տնօրինության տակ գտնվող հրթիռների մեծ քանակությունը կանխարգելող գործոն էր, քանի որ պատերազմի դեպքում երկու տերություններն էլ կարող էին ոչնչանալ, ապա միջուկային հրթիռների սահմանափակ քանակը Հնդկաստանի և Պակիստանի պարագայում հակառակ էֆեկտ ունի. փոխադարձ համաձայնության բացակայությունը և հակառակորդի նախահարձակ լինելու դեպքում անելանելի իրադրության մեջ հայտնվելու ահը մեծացնում է հրթիռներ կիրառելու ցանկությունը»:

Պակիստան-Հնդկաստան առճակատումը կամ «բացասական գործընթացներից՝ դրական արդյունք» քաղաքական տեխնոլոգիան

Երբ 2008թ. օգոստոսի 19-ին, ընդդիմության ճնշման տակ Պակիստանի նախագահ Փերվեզ Մուշարաֆը հրաժարական տվեց, միջազգային հանրությունը հիմնականում հետևում էր Հարավային Օսիայի շուրջ ընթացող վրաց-ռուսաստանյան պատերազմի զարգացումներին. այլ քաղաքական իրադարձությունները մղվել էին երկրորդ պլան: Մինչդեռ Կենտրոնական Ասիան դասական աշխարհաքաղաքականության տեսանկյունից առանցքային տարածաշրջան է, և գերտերությունները մշտապես ձգտել են վերահսկողություն սահմանել Եվրասիայի այդ հատվածի վրա: Չմանրամաս-

նելով պատմական իրադարձությունները և վերջին ժամանակների ռազմաքաղաքական զարգացումները՝ հիշենք, որ 9/11–ից անմիջապես հետո ԱՄՆ առաջնային թիրախը դարձավ Աֆղանստանը: Հատկանշական է, որ 2001-ին դարձյալ իրագործվեց քաղաքական մի տեխնոլոգիա, որը պայմանականորեն կարելի է անվանել «բացասական գործընթացներից՝ դրական արդյունք». հիմք ընդունելով և օգտագործելով 9/11-ի ահաբեկչությունը (բացասական գործընթաց)՝ Միացյալ Նահանգները (ՆԱՏՕ-ի հետ համատեղ) տրանսֆորմացրեց այն աշխարհաքաղաքական խոշոր նվաճման և ռազմական ներկայություն հաստատեց Կենտրոնական Ասիայում, իր հիմնական մրցակիցների՝ ՌԴ և ՉԺՀ հարևանությամբ (դրական արդյունք): Նախկինում նման տեխնոլոգիա կիրառվել է, օրինակ, 1941թ. դեկտեմբերին, երբ Փըրլ Հարբորի միջադեպն օգտագործվեց Երկրորդ աշխարհամարտին մասնակցելու համար, իսկ բոլորովին վերջերս՝ 2008-ին, նման մոտեցման օրինակներ կարող են ծառայել «գունավոր» ընտրական գործընթացները ՀՀ-ում[1] և վրաց-ռուսական պատերազմը[2]: Այդ քաղաքական հայեցակարգում ներկայումս առավել կարևորվում է տեղեկատվական գործոնը, ինչն էլ թույլ է տալիս որոշ հետազոտողների ներկայացնել այն որպես «երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների» բաղադրամաս:

Վերադառնալով նախագահ Մուշարաֆին պարտադրված հրաժարականին՝ կարելի է փաստել, որ նոր իշխանությունների օրոք զգալիորեն նվազեց Պակիստան պետության առանց այն էլ ոչ բարձր կառավարելիությունը: Որոշ վարկածների համաձայն, նման միտումը համընկնում է Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի՝ այդ տարածաշրջանում ունեցած ծրագրերի հետ, որոնք ենթադրում են ապակայունացնել տարածաշրջանը՝ ելնելով «ղեկավարվող քաոս»-ի հայեցակարգից *(տե՛ս վերը բերված Իրաքի օրինակը)* և արդյունքում, մասնավորապես, փորձել թուլացնել իրենց մրցակից Չինաստանին: Այդ վարկածի շրջանակներում նման ռազմավարության մասին կարող է վկայել 2008-ի նոյեմբերին հնդկական Մումբայ քաղաքի վրա կատարված ահաբեկչական հարձակումը, որը վերագրվեց պակիստանյան իշխանություններին և հատկապես այդ երկրի Միջզերատեսչային հետախուզությանը՝ *ISI*–ին[3]: Ոչ միայն հնդկական կառավարության, այլև անկախ

[1] *Гагик Арутюнян,* О выборных и поствыборных процессах в Армении, http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=1065

[2] *Гагик Арутюнян,* Особенности военного конфликта вокруг Южной Осетии, 21 Век, #2(8), с. 3, 2008.

[3] *Антон Меснянко,* Пакистану доказали его причастность к терактам, *http://www.utro.ru/articles/2009/01/05/790429.shtml*

դիտորդների կարծիքով, ահաբեկչությունը մշակված էր հենց հատուկ ծառայությունների կողմից: Այս առիթով նշենք, որ հատուկ ծառայությունների ոլորտի փորձագետները գրեթե միահամուռ են այն հարցում, որ «Թալիբան» շարժումը և բեն Լադենը պակիստանյան *ISI* -ի և ԿՀՎ-ի համատեղ աշխատանքի արդյունք են հանդիսանում. նման գործելակերպը հատուկ է ամերիկյան (և ոչ միայն ամերիկյան) հատուկ ծառայություններին: Մասնավորապես, առկա է վարկած, որ մեծ աղմուկ հանած Գուանտանամոյի և ԿՀՎ Արևելյան Եվրոպայում տեղակայված «գաղտնի» բանտերի իսլամական ծայրահեղականները հավաքագրվում և «ծրագրավորվում» են հատուկ ծառայությունների կողմից՝ հետագայում «ղեկավարվող ահաբեկչություն» կազմակերպելու նպատակով: Անուղղակիորեն նման վարկածի օգտին են վկայում այն հաղորդագրությունները, համաձայն որոնց՝ այդ բանտերից ազատ արձակվածների հիմնական մասը վերստին սկսում է զբաղվել ահաբեկչական գործունեությամբ[1]:

Մումբայում կատարված ահաբեկչության արդյունքում Հնդկաստան-Պակիստան հարաբերությունները ծայր աստիճան սրվեցին, զորքերը կուտակվեցին սահմանին, իսկ ԶԼՄ-ում սկսեցին դիտարկել միջուկային պատերազմի հնարավորությունը: Հատկանշական է, որ դեռևս 1997–2001թթ. ԱՄՆ վերլուծական–զինվորական ընտրանու կողմից մշակվել էին «Ասիա 2025» և «Միացյալ տեսլական 2020» *(Asia 2025" and "Joint Vision 2020")* փաստաթղթերը, որոնցում, մասնավորապես, մշակվել էին Պակիստան–Հնդկաստան հնարավոր միջուկային առճակատման սցենարները[2]: Դրանցից հատկապես ուշագրավ է հետևյալը.

«Նոր կարգեր Հարավային Ասիայում» սցենարը

2010թ. Պակիստանը գտնվում է խոր ճգնաժամում. տնտեսությունն անկում է ապրում, իշխանությունների անկարողության պատճառով երկիրն ապակայունանում է, որոշ ցեղեր ապստամբում են, ակտիվանում են իսլամական ծայրահեղականները, որոնք 2012թ. ներխուժում և իրենց վերահսկողության տակ են վերցնում հնդկական Քաշմիր նահանգը: Հնդկաստանը, որը ԱՄՆ-ի

[1] Տե՛ս, օրինակ, *http://lenta.ru/news/2009/01/14/gitmo*

[2] *"Asia 2025" and "Joint Vision 2020".* Blueprint for permament militarization of America by Srdja Trifkovic. The Rockford Institute - Center for International Affairs. Thursday, September 21, 2001, *www.Rockfordinstitute.org/NewsST092100.htm;* Walden Bello, Asia 2025: The Pentagon Prepares for Asian Wars, *http://www.pl.net/8politics/pentagon*; *Дмитрий Регентов,* США и Азия. Пасьянс по правилам "Азия 2025 ". Оценки Пентагона по развитию ситуации в Азии, *www.abirus.ru/o/r usa.htm*

հետ համագործակցության շնորհիվ առաջ էր անցել Չինաստանից և դարձել էր տարածաշրջանի առաջատարը, պահանջում է Պակիստանից զսպել ծայրահեղականներին ու դուրս բերել նրանց Քաշմիրից, սակայն թուլացած պակիստանյան իշխանություններն ի վիճակի չեն լինում կատարել այդ պահանջը: Հնդիկները լրացուցիչ զորքեր են մտցնում նահանգ: Պակիստանը պահանջում է դուրս բերել այդ զորքերը, և նրան աջակցում է Չինաստանը, որը սկսում է կենտրոնացնել իր զինուժը հնդկական սահմանի մոտ: Զարգացումներին միջամտում է ԱՄՆ-ը, որը տարածաշրջան նավատորմ է ուղարկում և վճռականորեն պահանջում է ՉԺՀ-ից չեզոքություն պահպանել:

Հակամարտությունը հասնում է գագաթնակետին, երբ Հնդկաստանը, երկյուղելով Պակիստանի կողմից ԶՈԶ-ի կիրառումից, ոչ միջուկային հրթիռային հարված է հասցնում այդ երկրի ԶՈԶ-ի հենակետերի և ահաբեկիչների ճամբարների վրա (մեկ այլ սցենարային տարբերակի համաձայն, ռազմական գործողությունների առիթ է հանդիսանում Քաշմիրի երկնքում Պակիստանի կողմից արձակված հրթիռով նախարարներ և բարձրաստիճան սպաներ կրող հնդկական ինքնաթիռի կործանումը): Պակիստանը՝ ի պատասխան, միջուկային զենք է կիրառում Հնդկաստանի դեմ: Սանձազերծված միջուկային պատերազմի (որին Հնդկաստանի կողմից ակտիվորեն մասնակցում է ԱՄՆ-ը, հրթիռային հարվածներ հասցնելով պակիստանյան միջուկային հենակետերի վրա) և ստեղծված քաոսի արդյունքում Պակիստանը 2020-ին որպես պետություն դադարում է գոյություն ունենալ: Մինչդեռ Հնդկաստանը վերածվում է անվիճելի առաջատարի, որի հետ ձգտում են սերտ հարաբերություններ հաստատել գրեթե բոլոր ասիական երկրները և առաջին հերթին՝ Իրանը:

Վերոնշյալ սցենարը ԱՄՆ շահերի տեսանկյունից գնահատվում է ամենաբարենպաստը: Պատերազմի հետևանքով նրա հիմնական մրցակից Չինաստանը մղվում է երկրորդ պլան, իսկ ասիական առաջատարների դերակատարումը ստանձնում են ԱՄՆ ռազմավարական գործընկեր Հնդկաստանը և Իրանը: Առաջինի հետ ամերիկացիները վերջին տարիներին զգալիորեն բարձրացրել են համագործակցության (այդ թվում՝ միջուկային ոլորտում) մակարդակը: Ինչպես արդեն նշել ենք վերը, ԱՄՆ-ը Իրանի նկատմամբ վարում է նոր ռազմավարություն, որի իրականացման պարագայում այդ երկրների միջև հարաբերությունները կարող են և գործընկերային բնույթ ստանալ:

Զարգացումների հնարավոր այլ տարբերակներ

Ամերիկյան մշակումներում առկա են նաև Չինաստանի գերակայությունը հաստատող սցենարներ, որոնք ենթադրում են ԱՄՆ դուրսմղում Հարավային Ասիայից և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից (այն կրում է «Հզոր Չինաստան» անվանումը)։ Ելնելով ներկայիս Չինաստանի զարգացման միտումներից՝ կարելի է կարծել, որ նման սցենարն ավելի իրատեսական է, քան «Նոր կարգեր Հարավային Ասիայում»-ը։ Միևնույն ժամանակ, բազմաբևեռ համակարգում ԱՄՆ-ը «առաջինն է հավասարների մեջ», և նրա կողմից հետևողականորեն իրագործվող ռազմավա-րությունը կարող է և էապես ազդել ցանկացած բնականոն թվացող գործընթացի վրա։

Այս ամենից բացի, չի կարելի բացառել տրամագծորեն հակառակ սցենարների հնարավորությունը։ ԱՄՆ նորընտիր նախագահ Բ.Օբամայի խորհրդատու Զբիգնև Բժեզինսկին ս.թ. հունվարի 12-ին Պեկինում կոչ արեց ստեղծել ԱՄՆ-ՉԺՀ «մեծ երկյակ» *(G 2),* որն ի զորու կլինի կարգավո-րել գլոբալ հիմնական խնդիրները[1]։

Դեռևս հայտնի չէ, թե ինչպես է այդ առաջարկին արձագանքելու Չինաստանը։ Դասականներից մեկը ժամանակին ասել է, թե «անգլո-սաքսերի հետ բարեկամություն անելը առավել վտանգավոր է, քան նրանց դեմ հակամարտելը»։ Այս հանգամանքը պետք է որ լավ ըմբռնած լինեն 19-րդ դարում «օպիումային պատերազմներում» բրիտանացիների կողմից ստորացում ապրած չինացիները։ Արդեն մեր դարաշրջանում ՉԺՀ-ԱՄՆ քաղաքական հարաբերությունների հիմնական կնճիռը Թայվանի խնդիրն է։ Միևնույն ժամանակ, Առաջին սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունների վերականգնումը և հարաբերական ջերմացումը ստիպեց ԽՍՀՄ-ին մեծ լարվածության գնով վերակառուցել իր պաշտպա-նական համակարգը։ Բոլոր պարագաներում բազմաբևեռ համակարգում միջազգային հարաբերություններն էական փոփոխություններ են կրելու, և այդ համատեքստում հնարավոր են նաև անսպասելի զարգացումներ։

[1] *Максим Момот,* Мир на двоих, *http://lenta.ru/articles/2009/01/15/brzezinski/*

ՃԳՆԱԺԱՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Իգոր Բաղիրյան[*]

Արդի իրավիճակը ծրագրված է անցյալով

Ցանկացած իրավիճակից դուրս գալու ելքի որոնումներին, ըստ երևույթին, պետք է նախորդի բուն իրավիճակի առավելագույն չափով ամբողջական իմաստավորումը և գիտակցումը: Հակառակ դեպքում, գտնված ելքը կտանի դեպի հերթական փակուղի:

Այս համատեքստում չափազանց կարևոր է գիտակցել, որ *ընթացիկ իրավիճակը Հայաստանի համար գալարագծով վերադարձ է դեպի անկախ հանրապետության ստեղծման պահին տիրող իրավիճակ:*

Այն ժամանակ քաղաքական և տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար ընդունվել են արևմտյան տնտեսության մասին ֆանտաստիկ, ամբողջովին խեղաթյուրված պատկերացումների վրա հիմնված որոշումներ: Թեև արդեն նման ընդհանրացված մոտեցումը կոպիտ սխալ է:

Հասարակացված, գոեհիկ ծայրահեղականությունը մտածողության մեջ սկզբից ևեթ մերժում է «ոսկե միջինի» որոնումները՝ օտպիմումը պլանավորման և ազատականացման միջև, որոնց ձևերի և համադրման աստիճանն էլ որոշել են տնտեսության բոլոր մոդելների բովանդակությունը:

Չնայած քաղաքական և տնտեսական իշխանափոխություններին՝ ընդհանուր գիծը տնտեսության ոլորտում մնացել է գրեթե անփոփոխ:

Բոլոր քիչ թե շատ նշանակալի փոփոխությունները կապված էին արտաքին քաղաքական գծի և օլիգարխների կազմում տեղ գտած «սրբագրումների» հետ:

Արդյունքում՝ տնտեսության և կադրային քաղաքականության բնագավառներում թաքնված ականներ մնացին, որոնք սպասում էին պայթելու

[*] Անկախ փորձագետ, տնտեսական գիտությունների թեկնածու:

իրենց ժամին: Մի օր այդ ժամը վրա էր հասնելու, և այն վրա հասավ: *Այդ իմաստով ճգնաժամը ընդամենը դրված ականների դետոնացիան է:*

Ճգնաժամից դուրս գալու ուղղությունները. անցյալի հիմնարար սխալների արմատական վերացում

Առաջին հերթին, անհրաժեշտ է ելնել հետևյալից. ճգնաժամն, ըստ էության, արտակարգ իրավիճակ է: Դա կառավարությանը հոգեբանական և իրավական հիմք պետք է տա ոչ սովորական, արմատական լուծումներ ընդունելու համար:

Ճգնաժամից դուրս գալու ուղղությունները պետք է պայմանավորված լինեն անցյալի հիմնական սխալների վերացման անհրաժեշտությամբ:

Առաջին ուղղությունը կապված է գյուղատնտեսության հետ

Գյուղատնտեսության մանրսեփականատիրական առկա հիմքը դրա զարգացման հիմնական արգելակն է: Այն թույլ չի տալիս կիրառել տնտեսվարման ժամանակակից, ինտենսիվ ձևերը:

Հայաստանի գյուղատնտեսությունը կանգնած է արմատական բարեփոխումների խիստ անհրաժեշտության առջև, որի նպատակն է տնտեսությունների խոշորացումը՝ դրանց արդյունավետության բարձրացման համար:

Այս հարցում չափազանց կարևոր է սոցիալական ասպեկտը՝ նոր ձևավորվող տնտեսությունների սեփականության ձևը: Անթույլատրելի է, որ բարեփոխումը հանգեցնի նրան, որ մարդկանց մեծ զանգվածներ հեռանան գյուղատնտեսությունից:

Անհրաժեշտ է մանրակրկիտ, յուրաքանչյուր մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ որոշել տնտեսվարման կոլեկտիվ և անհատական ձևերի օպտիմալ հարաբերակցությունը:

Գյուղատնտեսության բարեփոխման երկրորդ, չափազանց կարևոր ասպեկտը պետք է կապված լինի դրա ենթակառուցվածքի հետ:

Մոտեցման էությունը կարելի է արտահայտել ամրագրված կանոնով. ենթակառուցվածքը գյուղացու համար, այլ ոչ թե հակառակը: Խոսքը, մասնավորապես, ոռոգման վարձավճարի ձևերի և վճարման կարգի, տեխնիկայի օգտագործման, խորհրդատվությունների մասին է:

Անհրաժեշտ է խիստ վերահսկողություն սահմանել առևտրագնման կառուցվածքների վրա, որպեսզի գների ավելացումը գյուղացուց շուկա ճանապարհին չգերազանցի 15-20 տոկոսը:

Արտահանումը զսպող առանձին, խիստ կարևոր գործոն է նաև սերտիֆիկացումը եվրոպական չափանիշներին համապատասխան: Լուծման տարբերակներից մեկը կարող է լինել եվրոպական սերտիֆիկացման հայտնի կենտրոնի մասնաճյուղի բացումը:

Գյուղատնտեսության հարցում պետությունը և կուսակցությունը, որը նախարարի պաշտոնին առաջադրում է իր թեկնածուին, պետք է կնքեն պայմանագիր, որը նախատեսում է հստակ գծված բարեփոխումների իրականացումը և կողմերի պատասխանատվության աստիճանը:

Երկրորդ ուղղությունը կապված է հիմնարար գիտության հետ

Բոլոր քիչ թե շատ քաղաքակիրթ երկրներում ընդունված է միանգամայն տրամաբանական կանոն. ճգնաժամային իրավիճակներում դիմել երկրի մտավոր ներուժին:

Ակադեմիական գիտությունը ազգային մտավոր ներուժի կազմակերպված ձևն է:

Այն չի գործադրվել անկախության սկզբում, երբ դրա մակարդակը բավական բարձր էր:

Այսօրվա իրավիճակում գիտության զգալիորեն ցածրացած մակարդակը ոչ մի դեպքում չպետք է այն անտեսելու առիթ կամ պատճառ դառնա:

Կառավարությունն այս իմաստով պետք է հանդես գա որպես կազմակերպող գործոն:

Ստեղծված ճգնաժամային իրավիճակում ակադեմիական ինստիտուտները ոչ մի դեպքում չեն զրկվում իրենց ակադեմիական կարգավիճակից և բազիսային ֆինանսավորումից:

Միաժամանակ, արտակարգ իրավիճակը թելադրում է կիրառական ասպեկտի առավելագույն ինտենսիֆիկացում, բիզնեսի հետ կապերի ձևավորում և ամրապնդում:

Կառավարությունը կարող է յուրաքանչյուր ինստիտուտից՝ իր մասնագիտացմանը համապատասխան, պահանջել խոշոր բիզնեսի հնարավորություններն ընդլայնող գիտատար փոքր արտադրությունների ստեղծման ծրագիր:

Երրորդ ուղղությունը կապված է ռազմավարական սեփականատերերի (մոլիբդեն, պղինձ, քիմիա, էներգետիկա, տրանսպորտ) վրա կառավարության ազդեցության լծակների հետ:

Արտակարգ, սոցիալապես վտանգավոր իրավիճակի պայմաններում *անհրաժեշտ է ունենալ իրավական հիմք՝ կասեցնելու համար սեփականատերերի ռեակցիան բացառապես արտադրությունը կրճատելու ձևով:*

Սեփականատերը՝ ի դեմս նշանակված կառավարչի, պետք է կողմնորոշվի դեպի փոխզիջումային լուծումների որոնումը, այդ թվում՝ նոր արտադրությունների ստեղծումը: Հակառակ պարագայում կառավարությունը պետք է իրեն վերապահի սեփականատիրոջը փոխելու կամ առկա, շուկայականից ցածր գնով հետ գնելու իրավունքը:

Չորրորդ ուղղությունը՝ սոցիալականը, առանցքայինն է:

Որքան էլ տարօրինակ է (իհարկե, առաջին հայացքից), հենց ճգնաժամային իրավիճակում է անհրաժեշտ ուժեղացնել սոցիալական պաշտպանվածությունը: Հակառակ դեպքում քաղաքացիների դժգոհությունը կարող է դառնալ անվերահսկելի: Օրինակ, Ռուսաստանում վերջերս որոշում են ընդունել բարձրացնել կենսաթոշակները՝ հասցնելով մինչև ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնին, մեկ տարվա ընթացքում:

Այն իրավիճակում, երբ սոցիալական պաշտպանվածությունը և ինֆլյացիան հակասում են միմյանց, ընտրությունը պետք է կատարել հօգուտ առաջինի, բնականաբար՝ ինֆլյացիան պահելով բանական սահմաններում:

Անհրաժեշտ է կառավարության հովանու ներքո սոցիալական համաձայնության պայմանագիր ձևակերպել, որը կներառի շուկայի խոշոր մենաշնորհատերերի կողմից գների բարձրացման անթույլատրելիությունը:

Հինգերորդ ուղղությունը կապված է բանկային համակարգի ֆինանսական և մտավոր ներուժի ինտենսիֆիկացման հետ

Իմ կարծիքով՝ ճգնաժամը լուրջ կասկածի տակ դրեց կորպորատիվ ֆոնդային շուկայի՝ որպես բիզնես-գործունեության մեջ բնակչության խնայողությունների և ոչ ռեզիդենտների ներդրումների մասնակցության գործիքի, բացառիկությունը: Ֆոնդային շուկայի մոդելը պետք է կրի որքան հնարավոր է վերահսկելի, սպեկուլյատիվ տատանումները բացառող բնույթ: Միաժամանակ, անհրաժեշտ է ակտիվացնել ֆոնդային շուկայի այլընտ-

բանքային տարբերակների որոնումը:

Կենտրոնական բանկը ֆինանսական անվտանգության գաղափարախոսության և պրակտիկայի գրեթե մենաշնորհային կենտրոն է հանդիսանում և տնտեսական անվտանգության գաղափարախոսության տեսանկյունից առավելագույն ներուժ ունի:

Բայց դրա համար Կենտրոնական բանկը պետք է դառնա կառավարության լիարժեք, անկախ գործընկերը՝ տնտեսական վերլուծության լիարժեք ներուժի առկայության առումով:

Եվ վերջում կուզեի նշել հետևյալը: Մամուլում հաճախ խոսվում է այն մասին, որ ճգնաժամը կարող է նաև նպաստավոր լինել: Դա, իհարկե, այդպես է, սակայն միայն այն դեպքում, եթե՝ հաշվի առնելով ծայրահեղ իրավիճակը, արագ և արդյունավետ կերպով վերացվեն անցյալի հիմնարար սխալները:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ. 2008Թ. ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սամվել Մարտիրոսյան

Անցած տարին ի հայտ բերեց համակարգային մի շարք խնդիրներ Հայաստանի և ընդհանրապես Հայության տեղեկատվական պաշտպանվածության ոլորտում: Ադրբեջանական կողմը գնալով ավելի համակարգային մոտեցում է ցուցաբերում Հայաստանի դեմ տեղեկատվական պատերազմի կազմակերպմանը: Թուրքիան, իր հերթին, այդ ուղղությամբ վաղուց արդեն մշակված կառուցվածքներ ունի և Հայաստանի ու Հայության առավել վտանգավոր հակառակորդն է տեղեկատվական ճակատում:

2008թ. օգոստոսին Հարավային Կովկասի տարածաշրջանում իրավիճակի կտրուկ սրման, հայ-թուրքական հարաբերությունների փոփոխության, Ղարաբաղյան կարգավորմանը նոր թափ հաղորդելու փորձերի հետ կապված, ուժեղացավ նաև երրորդ ուղղություններից տեղեկատվական ճնշումը Հայաստանի վրա, որոնք ուղղակիորեն կապված չէին Ադրբեջանի և Թուրքիայի հետ:

Հայկական դիրքերի թուլացում՝ կապված ներքաղաքական անկայունության հետ

2008թ. առաջին կեսը տեղեկատվական առումով խիստ անբարենպաստ էր հայկական կողմի համար, ինչը պայմանավորված էր Հայաստանի ներքաղաքական իրավիճակով:

2007թ. վերջից մինչև 2008թ. հունիս-հուլիս ընկած շրջանում ինտերնետում սեփական նախաձեռնությամբ աշխատող հայերի գրեթե բոլոր վիրտուալ «մարտական» խմբերը լրիվ շարքից դուրս բերեցին կամ տեղեկատվական «տանիք» ապահովեցին ընդդիմության կամ իշխանությունների համար Հայաստանի ներսում: Այդ շրջանում տեղեկատվական ճակատում գրեթե իշխում էին միայն ադրբեջանական և թուրքական հատուկ ծառայություններն ու մամուլը: Միայն ամռան վերջին հայկական ուժերը կրկին ինչ-որ չափով համախմբվեցին, ինչը պայմանավորված էր ոչ միայն ներքին դիմակայության թուլացմամբ, այլև Հարավային Կովկասում ար-

տաքին քաղաքական իրավիճակի խորացմամբ, հայ-թուրքական հարաբերությունների ակտիվացմամբ: (Սակայն ներքաղաքական իրադարձությունների հոգեբանական հետևանքները դեռ որոշակի ժամանակ շարունակում էին ազդեցություն ունենալ, քանի որ խմբավորումների ներսում պառակտում առաջացավ տարաձայնությունների պատճառով):

Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ հենց 2008թ. օգոստոսին առաջին անգամ ՀՀ նախագահը նշեց տեղեկատվական անվտանգության կարևորությունը: Այս տեսակետից այդ տարին շրջադարձային եղավ քաղաքական ընտրանու կողմից տեղեկատվական անվտանգության՝ որպես ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչի, հարցերը գիտակցելու առումով:

Հայկական զանգվածային լրատվամիջոցները իրավիճակի սրման շրջանում

Հայկական մամուլը 2008թ. մի քանի ճգնաժամային փուլ է անցել, որոնք ի ցույց են դրել նրա որոշ խոցելի տեղերը արտաքին գործոնների նկատմամբ:

Հայկական տեղական լրատվամիջոցների չափից ավելի ուղղվածությունը դեպի ներքին խնդիրներն ու արտաքին հարցերի անտեսումն առանձնապես ի հայտ եկան երկրում քաղաքական պայքարի թեժացման շրջանում: Արդյունքը դարձավ տեղեկատվական դաշտի չափից ավելի խեղաթյուրումը.

- Ներքաղաքական պայքարի հետ չկապված տեղեկատվության գրեթե լիակատար արգելակում:
- Արտաքին քաղաքական բոլոր հարցերը (Ղարաբաղյան կարգավորում, եվրաինտեգրում, այլ երկրների հետ հարաբերություններ) կապվում են միայն ներքաղաքական պայքարի հետ:

Արդյունքում՝ տեղական մամուլը ձևախեղում է տեղեկատվական դաշտը՝ ձևախեղման հասցնելով նաև հանրային գիտակցությունը տարածաշրջանում Հայաստանի դերի ու տեղի մասին կեղծ պատկերացումներ ձևավորելու ուղղությամբ:

Մշտապես դրսևորվել է նաև հայկական մամուլի խոցելիությունը թշնամական քարոզչության և ապատեղեկատվության ներհոսի առումով, տեղեկատվության աղբյուրները «ֆիլտրելու» անկարողությունը: Այսպես, օրինակ, ինտերնետում լրագրողների կողմից Ղարաբաղյան կարգավորման այսպես կոչված Մադրիդյան սկզբունքների որոնումը ցույց տվեց, որ մեկ շաբաթվա ընթացքում հայկական ԶԼՄ-ն կարող է շրջանառել բրիտանացի

Բրյուս Թասկերի՝ իր բլոգում զետեղած ապատեղեկատվական նյութը:

Այսպես կոչված «հնգօրյա պատերազմը» 2008թ. օգոստոսին հայկական տեղեկատվական դաշտի ամրության ստուգման ևս մեկ լուրջ փորձություն դարձավ, որն այն հաղթահարել չկարողացավ: Հայկական ԶԼՄ չափից ավելի սևեռումը ներքաղաքական հիմնախնդիրների վրա հանգեցրեց նրան, որ օգոստոսին ընդդիմություն/իշխանություն դիմակայության թուլացման հետ կապված՝ գրեթե ողջ մամուլը ավանդական արձակուրդի գնաց: Եվ փաստորեն այն ժամանակ, երբ Հայաստանի սահմաններին մարտական գործողություններ էին ընթանում, երկրի ղեկավարությունը ստիպված էր օգտագործել օտարերկրյա ԶԼՄ-ն այս կամ այն կարևոր հայտարարությունը տարածելու համար: Մասնավորապես, հաշվի առնելով այն, որ այդ շրջանում ապատեղեկատվական մի շարք նյութեր են ներս նետվում, որոնք կոչված են զրպարտելու Հայաստանը, դաշտում հայկական մամուլի բացակայությունը ծայրահեղ ապակառուցողական դեր խաղաց: Ողջ տարածաշրջանի համար այդքան կարևոր պահին Հայաստանը լրիվ զրկված էր մեդիա-հոսքերը վերահսկելու հնարավորությունից, և միակ ակտիվ սեգմենտն այդ պահին բլոգերներն էին ու մասնավոր կայքեր ունեցողները, որոնք հնարավորություն ունեին բացատրական աշխատանք վարել ինտերնետում:

Ապատեղեկատվության տարածում

Հարավային Օսիայի օգոստոսյան պատերազմի շրջանում Հայաստանը կրկին ադրբեջանական կողմի սադրանքների թիրախ դարձավ, որոնք մի շարք դեպքերում ստանում էին վրացական ԶԼՄ աջակցությունը, ինչն ուժեղացնում էր դրանց էֆեկտը, քանի որ այդ ժամանակ Վրաստանի մամուլի նկատմամբ մեծ էր ողջ աշխարհի ուշադրությունը:

Հիմնական ցավոտ կետերը Ջավախքի հայերը, ինչպես նաև Գյումրիում գտնվող ռուսական ռազմակայանն էին: Ադրբեջանցիներին, վրացական ԶԼՄ աջակցությամբ, հաջողվեց երկու անգամ ապատեղեկատվության ալիք բարձրացնել այն մասին, որ Վրաստանի ռմբակոծության ժամանակ ռուսական ավիացիան օգտագործում է Հայաստանում գտնվող իր ռազմակայանը:

Այդ նույն ժամանակ Ադրբեջանն առաջին անգամ օգտագործեց հորինովի տեղեկատվական *xronika.am* կայքը, որը գրանցվել էր .am դոմեն գոտում և ներկայացվում էր որպես հայկական: (Ադրբեջանական կողմն օգ-

տագործեց այն փաստը, որ Հայաստանի դոմեն գոտին խիստ ազատական է, ինչի արդյունքում հնարավորություն կա արտասահմանյան հասցեներ գրանցել կեղծ անձնական տվյալներ օգտագործելով. կայքը գրանցված է Մոսկվայում, գոյություն չունեցող հասցեով, կինյան հեռախոսահամարով): Այս կայքի միջոցով տարածվել է հայտարարություն գոյություն չունեցող կազմակերպության անունից. «Ջավախքի հայրենասերները» անկախություն են պահանջում, որում վրացիների դեմ զինված պայքարի, Ջավախքի անջատման և այլ կոչեր էին արվում:

Եվ հենց այս պարագայում, բացի Հայաստանի ազատական օրենքներից, ադրբեջանական կողմն օգտագործեց նաև հայկական տեղեկատվական դաշտի խիստ խոցելի առանձնահատկությունը. այն փաստը, որ տեղական ԶԼՄ-ն օգոստոսին արձակուրդ են գնում, ինչը բավական ունիկալ երևույթ է ողջ աշխարհի համար: Համապատասխանաբար, հայկական կողմը Օսիայում պատերազմի ժամանակ գրեթե լիովին զրկված էր մեդիահնարավորություններից և խոցելի էր ապատեղեկատվական գրոհների առումով:

Ավելի ուշ, օգոստոսի վերջին, հայ-վրացական հարաբերությունների վատթարացմանն ուղղված սադրանքներն ուժեղացան ռուսական կողմից: Այսպես, օգոստոսի 29-ին Եվրասիական շարժման տեղեկատվական պորտալը սկսեց տեղեկատվություն տարածել այն մասին, որ «Երևանը Ջավախքում և Սվեմո-Քարթլիում զենք է բաժանում», երկրապահների ջոկատներ է կազմավորում և այլն[1]:

Հետագայում «եվրասիացիների» տեղեկատվական կառույցներն օգտագործվում էին ապատեղեկատվություն տարածելու և, հավանական է, հանրային կարծիքը «ստուգելու» համար՝ Մոսկվայում Ղարաբաղյան հարցի շուրջ հռչակագրի ստորագրումից առաջ: Մասնավորապես, մեծ ալիք բարձրացվեց բացահայտ ապատեղեկատվության շուրջ այն մասին, թե իբր ռուսական 58-րդ բանակը մտադիր է մտնել Ղարաբաղ[2]: Այս դեպքում հայկական ԶԼՄ-ն դարձան սույն ապատեղեկատվության տարածման հիմնական աղբյուրը, ինչը որոշակի ճնշող հոգեբանական էֆեկտ է ունեցել հայերի մեջ:

[1] http://www.evrazia.org/n.php?id=3816
[2] http://www.yerkramas.org/news/2008-10-16-1279

Հաքերական գրոհներ հայկական կայքերի վրա

Անցյալ տարին նշանավորվեց ինտերնետի հայկական սեգմենտի վրա քննադատական հարձակումներով: Տարվա ընթացքում հայկական սեգմենտի վրա պարբերաբար գրոհներ էին կազմակերպում թուրքական և հիմնականում ադրբեջանական հաքերական խմբավորումները: Նման հարձակումները թույլ վերահսկվող կամ անուշադրության մատնված կայքերի վրա վերջին տարիների համար բնական երևույթներ են: Սակայն օգոստոսին ադրբեջանական հաքերական խմբավորումների վերահսկողության տակ հայտնվեցին միանգամից մի շարք պաշտոնական վեբ-կայքեր:

Օգոստոսի 11-13-ին Հայաստանի մի շարք պաշտոնական կայքեր ենթարկվեցին ադրբեջանական հաքերական *Azerbaijan Defacers* խմբավորման գրոհին: Գրոհի ենթարկված կայքերի թվում էին Գլխավոր դատախազության, արդարադատության, կրթության և գիտության, երիտասարդության և սպորտի հարցերով նախարարությունների վեբ-ներկայացուցչությունները: Գրոհի ենթարկվեցին նաև «Ազգային օլիմպիական կոմիտեի, Հանրային հեռուստատեսության, Երևանի պետհամալսարանի, «Դե ֆակտո» տեղեկատվական գործակալության և մի շարք այլ կայքերը:

Բացասական է համարվում ոչ միայն միաժամանակ պետական և հասարակական նշանակության կայքերի խափանումը, այլև այն, որ դա տեղի էր ունենում Օսիայի համար մղվող պատերազմի շրջանում, այսինքն՝ այն պահին, երբ անվտանգության խնդիրները հրատապ և պետական գերակայություն էին դարձել: Դրական դարձավ այն փաստը, որ ադրբեջանական կողմը չկարողացավ օգտվել առավելությունից և հայկական պետական կառույցների անունից չտարածեց սադրիչ հայտարարություններ, որոնք կկարողանային հանգեցնել լուրջ հետևանքների ու հերթական հարվածը հասցնել Հայաստանի իմիջին:

Դեկտեմբերին հետևեց հերթական խոշոր գրոհը, որի արդյունքում խափանվեցին մոտ 30 կայքեր (ըստ ադրբեջանական ԶԼՄ-ի տեղեկությունների): Նշենք, որ որոշ հաքերներ իրենց նույնացնում էին նույն նիկնեյմերի (գաղտնանուն ունեցողների) հետ, ինչ և օգոստոսին պետական կայքերը խափանողները (այսպես, կայքերում կրկին նշվում էին *4R!F*-ը, *ƏLƏKBƏR*-ը, *ALOR*-ը, *Naxchiboy*-ը *Azerbaijan Defacers* խմբից):

2009թ. սկզբին գրոհները հայկական սեգմենտի վրա շարունակվում էին: Հարվածի տակ հայտնվեցին «Միտք» վերլուծական կենտրոնի կայքը և մի քանի այլ նման պորտալներ, ինչպիսիք են «Նաթնյուզը» և «Վոսկանապատը»: Գրոհվեցին նաև 100 այլ կայքեր (նշենք, որ դրանց ճնշող մեծա-

մասնությունը պատկանում էին նույն սեփականատիրոջը և հասարակական արժեք չէին ներկայացնում)[1]:

Մեկ այլ աղաղակող փաստ դարձավ ԱՄՆ-ում հայկական դեսպանության կայքի «վարակումը» ադրբեջանական վիրուսով: Չնայած բլոգերների հայտարարություններին, երկար ժամանակ վիրուսը չէր հեռացվում կայքից: Ավելին, դեսպանության ներկայացուցիչները ոչ միայն միջոցներ չէին ձեռնարկում վնասակար ծրագիրը վնասազերծելու համար, որը վարակում էր այցելուների համակարգիչները, այլև չէին էլ ընդունում վարակման փաստը[2]:

Արժե նշել, որ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ալի Աբասովը հայտարարեց, թե ադրբեջանական հաքերները կոտրում են հայկական կայքերը: Նախարարն ընդգծեց, որ Ադրբեջանը միացել է կիբեռհանցագործության դեմ պայքարի միջազգային կոնվենցիային և խստորեն հետևում է դրան: Ընդ որում՝ որոշակի փաստեր խոսում են այն մասին, որ ինտերնետում Հայաստանի դեմ գործում են ոչ թե պարզապես ադրբեջանական հաքերները, այլ դրանց խմբավորումները վերահսկվում են պետական կառույցների կողմից:

2008թ. վերջին ադրբեջանական կողմը հայտարարեց այն մասին, որ Ադրբեջանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը կից ստեղծվելու է նոր կառույց՝ Էլեկտրոնային անվտանգության կենտրոն, որը պետք է ապահովի Ադրբեջանի ինտերնետ-տիրույթի անվտանգությունը, կանխի հաքերական գրոհները պետական կայքերի վրա: Միանգամայն տրամաբանական է ենթադրել, թե սույն կենտրոնը կհամակարգի նաև հավանական գրոհները ցանցի հայկական հատվածի վրա:

Միևնույն ժամանակ, Հայաստանում չկա ոչ մի գործուն կառույց, որին կկարողանային դիմել կոտրված կայքերի տերերը: *Computer Emergency Response Team*-ը, որը կոչված է օգնել նման դեպքերում, ինքն է հայտնվել հարվածի տակ. երկար ժամանակ այդ կազմակերպության կայքը վարակված էր վիրուսով, իսկ այսօր չի գործում[3]:

[1] http://www.kavkaz-uzel.ru/articles/hakery_100_saitov
[2] http://ermeni.livejournal.com/9793.html
http://ermeni.livejournal.com/10124.html
[3] http://xelgen.livejournal.com/26575.html

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ Հայաստանի վրա գործադրվող տեղեկատվական ճնշումը տարեցտարի ուժեղանում է: Ընդ որում՝ զանազան նախագծերի ներմուծումը, որոնք բարձրացնում են տեղեկատվական տեխնոլոգիաների իմպլեմենտացիան պետական և հասարակական ցանցերում (*e-governement, e-learning* և այլն) էլ ավելի խոցելի է դարձնում Հայաստանը: Այժմ արդեն երկիրը գտնվում է այնպիսի իրավիճակում, երբ միջին լարվածության տեղեկատվական գրոհը կարող է առաջ բերել լուրջ հետևանքներ Հայաստանի համար, ընդ որում՝ ոչ միայն իմիջի, այլև տնտեսական, ռազմաքաղաքական, սոցիալական առումներով:

ԷՐԳԵՆԵՔՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Ռուբեն Մելքոնյան

Կարելի է վստահաբար պնդել, որ վերջին ժամանակներս Թուրքիայի ներքաղաքական կյանքի ամենակարևոր և բազմաթիվ առումներով ուշագրավ իրադարձություններից են Էրգենեքոն անվանված ահաբեկչական կառույցի շուրջ ընթացող զարգացումները: Այս գործը շատ հաճախ ասոցիացվում է նաև «խորքային պետություն» հասկացության հետ: Նշվում է, որ Էրգենեքոնի հայտնաբերումը և դատական գործընթացը իրականում պայքար է Թուրքիայում իշխող իսլամամետ ուժի և աշխարհիկ զինվորականության միջև: Այն, որ Էրգենեքոնում ակնհայտ է զինվորականության, այն էլ՝ բարձրաստիճան, ներկայությունը, անառարկելի փաստ է: Բավական է նշել, որ ներկայումս այդ գործով ձերբակալված կամ որպես կասկածյալ են անցնում թուրք բարձրաստիճան զինվորականներ, ինչպիսիք են, օրինակ, հայտնի պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքը, մայորներ Մեհմեթ Զեքերիա Օզթուրքը, Մեհմեթ Ֆիքրի Քարադաղը, կապիտան Մուզաֆեր Թեքինը: Կան նաև ձերբակալվածներ, որոնք հարցաքննվելուց հետո բաց են թողնվել, օրինակ գեներալներ Հուրշիթ Թոլոնը, Շեներ Էրույգուրը, որի ազատման պատրվակ է հանդիսացել նրա առողջական վիճակը: Ի դեպ, առողջական խնդիրներ ունենալը և այդ պատրվակն օգտագործելը բավական տարածված են Էրգենեքոնի կասկածյալների շրջանում, և նրանցից շատերը կամ արդեն հիվանդանոցում են, կամ դիմել են այդ պահանջով, իսկ զինվորականները շատ հաճախ տեղափոխվում են Գյուլհանեի ռազմաբժշկական ակադեմիա[1]: Ամեն դատական նիստի 5-7 կասկածյալներ չեն ներկայանում հիվանդ լինելու պատրվակով[2]: Ներկայումս Էրգենեքոնի գործով որպես կասկածյալ անցնում են շուրջ 100 հոգի[3], և այդ թիվն անընդհատ աճի միտում ունի: Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ կասկածյալների և ձերբակալվածների մեջ հանդիպում են տարբեր ոլորտների և մասնագիտությունների ներկայացուցիչներ. այսպես, այդ

[1] Erdal B., Ergenekon'da tutuklu sayısı 100'e çıktı, Zaman, 27.01.09.

[2] Erdal B., Ergenekon sanıkları sürekli hasta!, Zaman, 01.02.2009.

[3] Նույն տեղում:

գործով անցնում են Թուրքիայի Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքը, պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքը, պաշտոնաթող գնդապետ Մուսթաֆա Լևենթ Գյոքթաշը, Հատուկ օպերատիվ վարչության նախագահի նախկին պաշտոնակատար Իբրահիմ Շահինը, Ստամբուլի կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բաժնի պետ Սերդար Սաչանը, լրագրող Թունջայ Օզքանը, փաստաբան Քեմալ Քերինչսիզը, գիտնական Յալչընն Քյուչուքը, Անկարայի Առևտրի պալատի նախագահ Սինան Այգյունը և շատ ուրիշներ:

Հատկապես աչքի է զարնում այն, որ էրգենեքոնականների մեջ շատ են հանդիպում մարդիկ, որոնք ունեն հստակ հակահայկական պահվածք և ակտիվ պայքար են մղում Հայության և Հայաստանի դեմ: Ուշագրավ է այն, որ գործի քննության ժամանակ անուղղակիորեն պարզ դարձավ, որ նրանց հակահայկական գործունեությանը կազմակերպված բնույթ է հաղորդել հենց էրգենեքոն ահաբեկչական կառույցը:

Բացահայտ հակահայ գործունեությամբ ամենահայտնի անուններից է պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքը. նա պանթյուրքիստ է և ներկայումս այդ շրջանակների կողմից դասվում է 20-րդ դարի կարկառուն պանթյուրքիստների շարքին: Այս «բարձր» կոչման կարևոր գրավականներից է եղել Արցախյան պատերազմի ժամանակ և դրանից հետո գեներալ Քյուչուքի երբեմն բացահայտ օգնությունը «կրտսեր եղբայր» Ադրբեջանին: Բազմաթիվ կասկածելի գործարքների և գործողությունների հետ է կապված Քյուչուքը, սակայն արժե նշել, որ նրա անունը մեզ համար առավել հետաքրքրական դարձավ հատկապես հանգուցյալ Հրանտ Դինքի հալածանքների և այնուհետև սպանության խնդրի համատեքստում: Հիշեցնենք, որ հենց ազգայնամոլ երիտասարդական կազմակերպությունները, որոնք իրենց անվանում են «իդեալիստներ», սկսեցին Դինքի դեմ բացահայտ ակցիաներ, և հատկապես այն բանից հետո, երբ Դինքը «Ակօս» թերթում տպագրեց Թուրքիայի կարևոր խորհրդանիշներից մեկի՝ առաջին կին օդաչու Սաբիհա Գյոքչենի հայկական արմատները փաստող մի հոդված, «իդեալիստները» ցույց արեցին «Ակօսի» խմբագրատան առջև՝ պարզելով սպառնալից պաստառներ, որոնց վրա գրված էր «Դինք, դու մեր թիրախն ես»: Հարկ է նշել, որ «իդեալիստները» «Գորշ գայլեր» ազգայնամոլական կառույցի երիտասարդական թևն են կազմում, և պատահական չէր, որ Դինքին սպանեց նույնպես երիտասարդ ազգայնամոլ: Այս բոլոր շրջանակների համար գեներալ Վելի Քյուչուքը անվերապահ հեղինակություն է: Կան Դինքի սպանության մեջ ընդգրկված անձանց ու Քյուչուքի ուղղակի շփումները հաստատող փաստեր: Քյուչուքը բացահայտ շահագրգռվածու-

թյուն էր ցուցաբերում Դինքին հալածելու մեջ. նա անգամ մասնակցել է Դինքի դատավարության նիստերին: Ի դեպ, այդ հանգամանքն անհանգստացրել էր Դինքին և նրա մերձավոր շրջապատին, ու ինչպես սպանությունից հետո խոստովանեց Հրանտի եղբայրը՝ Խոսրով Դինքը, նրա եղբայրը սկսել է իրականում գիտակցել հալածանքների առավել վտանգավորությունն ու լրջությունը հատկապես հրապարակում Վելի Քյուչուքի բացահայտ երևալուց հետո:

Էրգենեքոնի դատական գործի շրջանակներում ևս շատ ուշագրավ դեպքեր տեղի ունեցան Քյուչուքի անձի հետ կապված: Դատական նիստերից մեկում, ինքնապաշտպանական ճառի ժամանակ, խոսելով 2000թ. բանակից զորացրվելուց հետո իր գործունեության մասին, նա հայտարարել է. «Ես մասնակցում էի թուրքական հետազոտական կրթական հիմնադրամի միջոցառումներին, երբեմն-երբեմն նաև ելույթներ էի ունենում: Ելույթներ եմ ունեցել արևելյան հարցի վերաբերյալ և միշտ պաշտպանել եմ այն տեսակետը, թե դա քրդական հարց չէ: Գյուղ առ գյուղ բացատրել եմ, որ *PKK*-ն (Քրդական բանվորական կուսակցություն) քրդական չէ, որ արևելյան հարցը ոչ թե քրդական, այլ հայկական հարց է: Եվ քանի որ իմ այս մտքերը ոմանց դուր չեն եկել, այդ պատճառով ես այսօր այստեղ եմ»[1]: Հայերին ուղղված նման մեղադրանքները նոր չեն թուրքական քաղաքական դիսկուրսում, սակայն հետաքրքիր է, որ այդ մասին բացահայտ արտահայտվում է բարձրաստիճան զինվորականը՝ որպես թշնամի նշելով հայերին, որոնք խորթ են թուրքերին, իսկ մուսուլման քրդերը գոնե իրենց կրոնական եղբայրներն են: Ի դեպ, Էրգենեքոնի գործով անցնող այլ մեղադրյալներ ևս արտահայտել են այս նույն գաղափարը և իրենց ձերբակալվելու իրական պատճառ համարել հայկական խնդիրը: Հարկ է նշել, որ *PKK*-ի, իբրև թե, հայկական պատկանելության մասին արտահայտվել են տարբեր մակարդակի թուրք պաշտոնյաներ՝ սկսած ներքին գործերի նախարարուհուց մինչև նահանգապետ. այս թեման թուրքական քաղաքական շահարկումների զինանոցի կարևոր տարրերից է: Ժամանակ առ ժամանակ թուրքական մամուլը և տարբեր գերատեսչություններ աղմուկ են բարձրացնում իբր Հայաստանում գտնվող *PKK*-ական զինյալների կամ նրանց ճամբարների մասին:

Էրգենեքոնի գործով ձերբակալված է նաև թուրք փաստաբան Քեմալ Քերինչսիզը, որը դատական գործ հարուցեց գրող Օրհան Փամուքի դեմ նրա հայտնի հայտարարությունից հետո: Նա նույնպես Վելի Քյուչուքի սաներից է

[1] www.hyetert.com/haber3.asp?Id=30935&DilId=1

ու նաև ակտիվորեն ներգրավված էր Հրանտ Դինքի դեմ դատական արշավին:

Մյուս կասկածյալը՝ Անկարայի Առևտրի պալատի նախագահ Սինան Այգյունը, առաջիններից էր, որ դժգոհություն արտահայտեց Դինքի սպանությունից հետո մեծ տարածում գտած «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինքն ենք» կարգախոսի դեմ:

Էրգենեքոնի գործով անցնող հաջորդ հայտնի դեմքը Թուրքիայի Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքն է: Ավելորդ չէ նշել, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ մղվող գործընթացում նա թուրքական պետական, քարոզչական մեքենայի կարևոր օղակներից է: Հայտնի է նաև, որ Դողու Փերինչեքն ունի հայկական ծագում, սակայն նրա գործունեությունն ուղղված է Հայության դեմ. նման երևույթ երբեմն հանդիպում է կրոնափոխված ու դիմախեղված մարդկանց շրջանում[1]: Էրգենեքոնի դատավարության շրջանակներում պարզվել է, որ Փերինչեքն այդ կազմակերպության ղեկավար անդամներից և կազմակերպիչներից է, սակայն ամենակարևորն այն է, որ նրա միջոցով հիշյալ խմբավորումը կապ է ունեցել *PKK*-ի և նրա զինյալների հետ: Հրապարակվել են անգամ Փերինչեքի և Աբդուլա Օջալանի լուսանկարները քուրդ զինյալների ճամբարներից մեկում: Դատավարության ժամանակ ներկայացվել է նաև 2000թ. մայիսի 26-ին Փերինչեքի «խորհրդատվական» նամակը Օջալանին[2]: *PKK*-ի և Էրգենեքոնի ենթադրյալ կապը մեջտեղ բերելով՝ թուրքական իշխանությունները, մեր կարծիքով, մի քանի նպատակի են հասնում. նախ ցույց է տրվում քրդական զինյալների և թուրքական «խորքային պետության» կապը, որն այդ ամենն օգտագործել է երկրում անկայունություն, այն է՝ հեղաշրջման նախադրյալներ ստեղծելու և իրականացնելու համար, սակայն էլ ավելի կարևոր է այն, որ այս բացահայտումը խոր հիասթափություն է առաջացրել հենց ընդդիմադիր քրդերի շարքերում, որոնց մի մասը նույնիսկ համակվել է խաբվածի տրամադրություններով: Մյուս կողմից, ներկայումս թուրքական իշխանությունները լծված են քրդական հեռուստաալիք և ռադիոկայան բացելու աշխատանքներին, և ակնհայտ է, որ դա ևս զգալի մեղմացում կմտցնի քրդական հարցում:

Դողու Փերինչեքի գործունեության այն փուլը, որը վերաբերում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարին, նույնպես անուղղակիորեն տեղ է գտել դատական գործընթացի շրջանակներում: Այսպես, հայտնի է, որ թուրքական «Թալեաթ փաշա» ոչ երկիմաստ անու-

[1] Մանրամասն տե՛ս *Մելքոնյան Ռ.,* Թուրքիայում ինքնության դրսևորումների շուրջ, Հանրապետական, Երևան, 2008, թիվ 11, էջ 5-8:

[2] Erdal B., Ergenekon'da tutuklu sayısı 100'e çıktı, Zaman, 27.01.09.

նով կազմակերպությունը բազմաթիվ միջոցառումներ է կազմակերպում հատկապես Եվրոպայում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ: Այդ նույն կազմակերպության գործուն անդամներից է նաև Փերինչեքը: «Թալեաթ փաշա» կազմակերպությունը հատկապես ակտիվ էր 2005-2006թթ., երբ թուրք մի շարք քաղաքական գործիչներ, գիտնականներ համատեղ գործունեություն էին ծավալում այս ուղղությամբ, նրանց շարքերում էին Հյուսիսային Կիպրոսի չճանաչված հանրապետության նախկին նախագահ Ռաուֆ Դենքթաշը, պատմակեղծարար Յուսուֆ Հալաչօղլուն և այլք: Այս ամենի արդյունքում էր, որ Փերինչեքի դեմ Շվեյցարիայում գործ հարուցվեց Հայոց ցեղասպանության փաստը մերժելու համար (հետո նա դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ մեծ աղմուկ բարձրացնելով այդ հարցի շուրջ): Սակայն ուշագրավ է, որ Էրգենեքոնի դատական գործի շրջանակներում ի հայտ է եկել այն, որ «Թալեաթ փաշա» կոմիտեն ևս Էրգենեքոնի ստեղծած կառույցներից է և գործել է ահաբեկչական կազմակերպության հրահանգներով[1]: Խոսելով այս մասին՝ Փերինչեքը դատարանում հայտարարել է հետևյալը. «Այդ խմբի մեջ էին մտնում իշխող Արդարություն և զարգացում կուսակցության այն ժամանակվա պատգամավորներ Նևզաթ Յալչընթաշը, Մեհմեթ Դյուլգերը և Իբրահիմ Օզդողանը»[2]: Այնուհետև թվարկելով գիտնականների, այլ քաղաքական գործիչների անուններ՝ Փերինչեքը հայտարարել է. «Եթե այդ բոլորը Էրգենեքոնն էր կազմակերպում, ապա ստացվում է, որ այդ բոլոր մարդիկ էրգենեքոնականներ են»[3]: Բանվորական կուսակցության ազգայնամոլ ղեկավարը չի մոռանում նաև իր «որդեգրած» քաղաքական կողմնորոշման մասին և իր ձերբակալման գործում մեղադրում է «իմպերիալիստական ուժերին» և մասնավորապես ԱՄՆ-ին:

Անդրադառնալով Փերինչեքի ծայրահեղ հակահայկական գործունեությանը՝ հարկ է նշել, որ թուրքական մամուլը վերջերս տպագրել է Դոդու Փերինչեքի ավելի վաղ արած հայտարարություններն ընդհանրապես հայկական խնդրի մասին, որոնք ևս մեկ անգամ վկայում են նրա փոփոխական, հակասական կերպարի մասին: Թուրքիայի իշխող կուսակցության խոսափող «Զաման» օրաթերթն արտատպել է «Թուրքական ձախ» ամսագրի 88-րդ համարում տեղ գտած Փերինչեքի հոդվածը, որը վերնագրված է հետևյալ կերպ. «Իթթիհադական կոմպրադորները հարյուր հազարավոր հայեր են կոտորել»: Ի դեպ, նրա այս մտքերը հնչել են մեկ այլ՝ ավե-

[1] http://www.hyetert.com/haber3.asp?Id=31265&DilId=1

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

լի վաղ տեղի ունեցած դատական գործի ժամանակ. այսպես, 1969թ. Փերինչեքը հիմնում է «Թուրքիայի բանվորների և գյուղացիների կուսակցությունը», որը 1971թ. զինվորական միջամտությունից հետո փակվում է, իսկ Փերինչեքը և նրա ընկերները ձերբակալվում են: Իր պաշտպանական ճառը դատարանում նա այնուհետև վերածում է գրքի, որի 154-րդ էջում խոսում է հայկական խնդրի վերաբերյալ. «Իթթիհադական կոմպրադորները ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացրին հալածանքի և կոտորածի քաղաքականություն: Արևելքում հարյուր հազարավոր հայերի կոտորեցին, մնացածներին էլ իրենց երկրից աքսորեցին… Աբդուլ Համիդը կայսրությունը արևելյան Անատոլիայում կոտորված հարյուր հազարավոր աշխատավորների և Ստամբուլի փողոցներում սպանված հազարավոր հայերի արյունով ներկեց»[1]:

Էրգենեքոնի գործով անցնող մեղադրյալների մեջ իր աղմկահարույց ցուցմունքներով հատկապես աչքի է ընկնում Թուրքիայի Հատուկ օպերատիվ վարչության նախագահի նախկին պաշտոնակատար Իբրահիմ Շահինը: Նրա ցուցմունքներում հետաքրքիր մանրամասներ կան նաև հայկական ուղղվածությամբ. նա իր գործունեության տարբեր փուլերում զբաղվել է հայկական խնդիրներով, մասնավորապես՝ 1983թ. նշանակվել է ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարի համար ստեղծված ոստիկանական ուժերի հրամանատար, այս նպատակով կրթություն ստանալու համար եղել է Գերմանիայում և ԱՄՆ-ում[2]: Ըստ քրեական գործի նյութերի, Շահինը ստեղծել է 300 հոգուց բաղկացած մի թիմ, որի կազմում են եղել օպերատիվ վարչության աշխատակիցներ և 30 տարեկանից ցածր զինվորներ[3]: Հիշյալ թիմի միջոցով ահաբեկչական կառույցը ծրագրել և իրականացրել է գործողություններ: Դատարանում Շահինը ցուցմունք է տվել, որ թիմը ստեղծել է Թուրքիայի բանակի յոթերորդ կորպուսի հրամանատար, գեներալ Բեքիր Քալյոնջուի և Գլխավոր սպայակույտի կապի ու հաղորդակցության վարչության պետ, բրիգադի գեներալ Մեթին Գյուրաքի ցանկությամբ[4]: Շահինը 1993թ. Թուրքիայի ներքին գործերի նախարարության հանձնարարականով ստեղծել է Հատուկ օպերատիվ վարչությունը, որտեղ աշխատել է մինչև 1996թ., 2002թ. դատապարտվել է 6 տարի ազատազրկման մեկ այլ՝ Սուսուրլուքի հայտնի դեպքին առնչություն ունենալու մեղադրանքով, սա-

[1] Acar E., Arşivler de Doğu Perinçek'i yalanlıyor, Zaman, 24.1.2009

[2] ASALA'ya karşı Almanya ve ABD'de eğitim aldım', www.hyetert.com/haber3.asp?Id=31161&DilId=1

[3] Devlet benden 300 kişilik liste istedi, Hurriyet, 12.1.2009

[4] ASALA'ya karşı Almanya ve ABD'de eğitim aldım', www.hyetert.com/haber3.asp?Id=31161&DilId=1

կայն Շահինին, կրկին առողջականի պատրվակով, Թուրքիայի նախագահի կողմից ներում է շնորհվել: Ի դեպ, այս գործի առնչությամբ շրջանառվել է նաև Վելի Քյուչուքի անունը:

Ինչպես պարզ է դառնում Շահինի ցուցմունքներից, նա ինտենսիվորեն զբաղվել է հայկական խնդիրներով նաև թոշակի անցնելուց հետո: Ստորև ներկայացնում ենք մի մեջբերում նրա ցուցմունքներից. «Ես ծանոթ եմ Ասենա մականունով հայտնի Ֆաթմա Ջենգիզի հետ, որն ապրում է Կեսարիայում, և երբեմն-երբեմն այցելում էի նրան: Նա գիտեր, որ ես հետաքրքրվում էի հայկական խնդրով և ինձ ծանոթացրեց մի գրողի հետ: Վերջինիս հետ զրույցում նա պատմեց, որ Թոմարզայում հայերն ամենամսյա հավաքներ են կազմակերպում, և սրանց պատասխանատուն Սեբաստիայում ոսկեգործությամբ զբաղվող մեկն է: Ես էլ այս ամենի մասին մանրամասն տվյալներ հավաքելով՝ ցանկացա տեղեկացնել հետախուզությանը»[1]: «…Հուդայի անունով մի անձ ինձ հայտնեց Սերփիլ անունով մի կնոջ մասին: Ասաց, որ այս կնոջ իսկական անունը Մաթիլդ Սարսանյան է, և նա Երզնկայի շրջանում ոսկի է փնտրում: Հուդային, բացի այդ, ասաց, որ այս կինը հարավ-արևելքում տարբեր նահանգներում տներ է հիմնում, որտեղ ապաստան է տալիս արտասահմանից եկած հայերի: Ես էլ այս մասին հայտնեցի Ազգային հետախուզական ծառայությունից *(MIT)* իմ ծանոթ մարդկանց, որից հետո ավելի մանրամասն տեղեկություններ պահանջեցին»[2]: Ուշագրավ է նաև, որ Շահինը աշխատել կամ հանձնարարություն է ստացել, որ ճշտի տվյալները տարբեր կուսակցությունների անդամների, քաղաքական գործիչների և հայտնի մարդկանց էթնիկ ծագման մասին: Ըստ նրա ցուցմունքների, քրդական Ժողովրդավարական հասարակարգ կուսակցության մեջ կան 520 հայեր: Սակայն էլ ավելի ուշագրավ փաստեր են ի հայտ եկել Շահինի նոթատետրում, որտեղ նշված են եղել տվյալներ տարբեր քաղաքական գործիչների էթնիկ ծագման մասին: Շահինի նոթատետրում ձեռագրով նշված է եղել, որ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ, Գորշ գայլեր) նախագահ Դևլեթ Բահչելին, Ժողովրդական հասարակարգ կուսակցության նախագահ Ահմեթ Թուրքը, ԱՇԿ պատգամավորներ Մեհմեթ Շանդրը, Մեհմեթ Էյմուրը հայկական ծագում ունեն[3]: Հիշյալ նոթատետրում կա մեկ պնդում ևս, համաձայն որի՝ «Անատոլիայի» կենտրոնական և հարավարևելյան շրջանների միջև ընկած տարածքի

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] MHP YÖNETİCİLERİNİ DE ERMENİ DİYE FİŞLEMİŞ!,www.hyetert.com/haber3.asp?Id=31202&DilId=1

բնակչությունն իբր թե կազմված է հայերից[1]:

Շահինը ևս, ինչպես Վելի Քյուչուքը և այլք, առաջ է քաշում այն պնդումը, թե *PKK*-ն ոչ թե քրդական, այլ հայկական կառույց է. «*PKK*-ն քրդական ծագմամբ մեր եղբայրներին ներկայացնող մի կառույց չէ, այլ հայկական կառույց է[2]»: Նա պնդում է, որ մասնագիտական գործունեության ընթացքում պայքարել է *PKK*-ի դեմ, իսկ թոշակի անցնելուց հետո սկսել է գրքեր գրել, որտեղ մշակել է այն միտքը, թե *PKK*-ն հայկական կառույց է[3]: Իր այս մտքերն արտահայտել է նաև տեղական հեռուստաալիքներով[4]:

Քննությունից պարզ է դարձել, որ Շահինի խումբը նաև մահափորձեր է ծրագրել. հավանական զոհերի ցուցակում եղել են Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի, Ալևի-բեքթաշի դաշնության գլխավոր քարտուղար Քազըմ Գենչի, նույն դաշնության նախագահ Ալի Բալքըզի անունները[5]: Ուշագրավ է, որ Շահինն իրենց նախատեսած գործողություններն անվանել է «ներքին մաքրություն» և թիրախների ընտրության հարցում առաջնային է համարել նրանց առնչությունը հայկական խնդրին: Այսպես, Շահինը խոստովանել է, որ եթե չձերբակալվեր, ապա մեկ շաբաթ հետո սկսվելու էր գործողություն հայերի ղեկավարների դեմ[6]: «Ներքին մաքրության» շրջանակներում գործողություններ են նախատեսվել նաև մի շարք թուրք մտավորականների՝ վերջերս ձեռնարկած «Ներողություն եմ խնդրում» ակցիայի կազմակերպիչների դեմ: Շահինի և իր հանցախմբի գործունեության ընթացքում ուշադրության կենտրոնում են հայտնվել նաև ալևիական կազմակերպությունները, հատկապես այն պատճառով, որ, ըստ իրենց աղբյուրների, այդ կազմակերպություններում ևս հայեր կան: Մահափորձ է նախատեսվել նաև Սեբաստիայի հայ համայնքի առաջնորդ Մինաս Դուրան Գյուլերի դեմ[7]: Ըստ Մինաս Գյուլերի եղբոր՝ Երվանդ Գյուլերի, Սեբաստիայում ապրող հայերի թվաքանակը չի գերազանցում 200-ը, ինչն օրեցօր նվազում է, չնայած, ըստ պաշտոնական տվյալների, հայերի թիվը Սեբաստիայում 1136 է: Մինաս Գյուլերը միևնույն ժամանակ նաև Կեսարիայի, Թոքաթի, Երզնկայի հայ «համայնքների» պատասխանատուն է[8]: Ակնհայտ է, որ Թուրքիայի արևելյան շրջաններում պահպանված քրիս-

[1] Նույն տեղում:
[2] ASALA'ya karşı Almanya ve ABD'de eğitim aldım', www.hyetert.com/haber3.asp?Id=31161&DilId=1
[3] Նույն տեղում
[4] Devlet benden 300 kişilik liste istedi hurriyet.com.tr12.1.2009
[5] İki suikast timine operasyon Zaman, 23.01.09
[6] 'Yakalanmasaydım bir hafta sonra operasyon başlıyordu', Radikal,12.2.2009
[7] Նույն տեղում:
[8] Ergenekon neden Sivas'ı seçti?, Zaman, 16.02.2009.

տոնյա հայության բեկորներին համայնք կոչելը խիստ դժվար է: Շահինի հանցախմբի կողմից հատկապես Սեբաստիայի ընտրությունը բացատրվում է նրանով, որ այն քիչ թե շատ բազմէթնիկ նկարագիր ունի և հարմար է վախի մթնոլորտի խորացման, անկայունության ստեղծման համար, ինչը լիովին տեղավորվում է Էրգենեքոնի գործունեության տրամաբանության շրջանակներում: Ի դեպ, հարկ է նշել, որ պարզ է դարձել, թե հենց Էրգենեքոնն է կազմակերպել նաև 2007թ. ապրիլի 18-ին Մալաթիայի Զիրվե հրատարակչության երեք քրիստոնյա աշխատակիցների սպանդը, որը մեծ աղմուկ բարձրացրեց Թուրքիայում և նրա սահմաններից դուրս:

Այսպիսով, այս աղմկահարույց դատավարությունը և դրա ընթացքում արվող բացահայտումները ցույց են տալիս, որ հակահայկական բազմաթիվ գործողություններ կազմակերպվել կամ կատարվել են թուրքական պետության կամ դրա «խորքային» տարբերակի կողմից: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ թուրքական քարոզչական և պետական մեքենան, ըստ էության, շարունակում է թշնամու կատեգորիայում տեսնել գերազանցապես հայերին: Ուշագրավ և ինչ-որ տեղ արդեն սպասելի է, որ էթնիկ ծագման հարցը նույնպես գտնվում է պետական մարմինների ուշադրության կենտրոնում, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ Թուրքիայի օրակարգում է էթնիկ ծագման և դրա տարատեսակ դրսևորումների խնդիրը:

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԱՅՍՕՐ

Արեստակես Միմավորյան

Հավաքական իմաստով աշխարհի տարբեր երկրներում գաղթավայր կազմած առաքելադավան Հայության կողքին այսօր առանձին կրոնական համայնքների կարգավիճակով գոյություն ունեն հայ կաթոլիկների մեծ ու փոքրաթիվ խմբեր։ Ցավոք, այսօր անտեսվում է կամ գրեթե չի խոսվում Հայության՝ բավական մեծ ներուժ ունեցող այս տարադավան համայնքի գործունեության մասին։ Իսկ անտարբերությունը, ինքնաբերաբար, նրանց մեկուսացնում է Հայության ընդհանուր խնդիրներից՝ վերածելով ինքնամփոփ, իր իրավասություններով պարփակված հայ կրոնական համայնքի, որն, անշուշտ, սպառելով իրեն՝ կփոշիանա։

Շատ դեպքերում հայ կաթոլիկների մասին պատկերացումները սահմանափակվում են Մխիթարյան միաբանության, Սիրիայի, Լիբանանի համայնքների կամ առնվազն Հայաստանի, Վրաստանի «ֆրանգների» գոյությամբ, այն պարագայում, երբ նրանք զբաղեցնում են բավական լայն աշխարհագրական արեալ։

Հայ կաթոլիկներն այսօր իրենց ազգային նկարագիրը պահպանելու խնդիր ունեն։ Ազգապահպան այդ գործը հնարավորինս կատարվում է Մխիթարյան միաբանության հայրերի կողմից, ովքեր փորձում են պահպանել տարբեր երկրներում իրենց տրամադրության տակ գտնվող դպրոցների, վարժարանների դեռևս չխամրող գործունեությունը։

Տարբեր տվյալներով ներկայումս աշխարհում հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդները հինգ հարյուրից վեց հարյուր հազարի են հասնում։ Նրանց հոգևոր պահանջները բավարարելու համար պատմական տարբեր ժամանակահատվածներում ստեղծվել են թեմեր, դրանց մեծ մասն ունի ընդամենը մի քանի տարվա պատմություն, ինչպիսին է, օրինակ, Ավստրալիայի հայ կաթոլիկ համայնքը։

Արևելաեվրոպական թեմ (օրդինարիատ). արևելաեվրոպական թեմը բավական մեծ աշխարհագրական տարածք է զբաղեցնում՝ ընդգրկելով Հա-

յաստանի, Վրաստանի և ԱՊՀ բոլոր հայ կաթոլիկներին: Թեմը ստեղծվել է Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, առաջնորդարանը Գյումրիում է: 1992-ին Հայ Կաթողիկե համայնքը Հայաստանում պաշտոնական ճանաչում ստացավ, ինչն ամրագրվեց Մարդու իրավունքների հռչակագրի հիման վրա, այնուհետև՝ 1993-ին, թեմի պաշտոնական բացումը կատարվեց Գյումրիում[1]: Հայաստանում կաթոլիկների թիվը 180 հազար է[2], որոնք հիմնականում բնակվում են հյուսիսային շրջաններում, մասնավորապես՝ Շիրակի, Տաշիրի և Լոռու մարզերում, մասամբ Երևան, Գյումրի, Արթիկ քաղաքներում:

Մոտ 50 հազար հայ կաթոլիկներ են բնակվում Վրաստանի Սամցխե-Ջավախքի՝ Նինոծմինդայի, Ախալքալաքի, Ախալցխայի հայաբնակ գյուղերում: Ջավախքի սոցիալ-տնտեսական ծանր կացության պատճառով ինչպես այդ տարածքի ողջ Հայության, այնպես էլ կաթոլիկների շրջանում բարձր է արտագաղթողների տոկոսը: Փաստենք, որ կաթոլիկ հայերը միշտ էլ ամուր կապեր են ունեցել տեղի լուսավորչական հայերի հետ:

Փոքրաթիվ կաթոլիկ հայեր բնակվում են Բաթումում, Փոթիում, որոնք չունեն կազմակերպված համայնք: Թիֆլիսի և Վրաստանի տարբեր վայրերում ձևավորված երբեմնի ավանդական հայ կաթոլիկ համայնքներն այլևս գոյություն չունեն, ինչը վրաց իշխանությունների՝ էթնիկ հայ կաթոլիկներին ուծացնելու հետևողական քաղաքականության արդյունք է:

Ռուսաստանի Դաշնությունում ամենակազմակերպվածը, թերևս, Մոսկվայի հայ կաթոլիկ համայնքն է, որը գործում է 2000 թվականից: Սկզբնապես հայ կաթոլիկները հավաքվում էին Մոսկվայի Սբ. Լյուդովիկոս եկեղեցում՝ միանձնուհի Նունե Պողոսյանի ղեկավարությամբ, սակայն վերջինիս հեռանալուց հետո որոշ ժամանակ հավաքները դադարել էին, և միայն 2002 թվականից այն սկսեց գործել իտալացի վանահայր Միքայել Բասալեի հովվապետությամբ[3]: Համայնքի ներկայացուցիչները Հայաստանից, Վրաստանից արտագաղթած, Ռուսաստանի տարբեր քաղաքներից մայրաքաղաք տեղափոխված հայ կաթոլիկներ են, ովքեր այս կերպ փորձում են կազմակերպվել: Առանց եկեղեցական արարողակարգի հայ կաթոլիկների ոչ մեծ խմբեր են բնակվում Կրասնոդարի երկրամասում,Պսկովում, Ռոստո-

[1] http://www.armeniancatholic.org/inside.php?lang=am&page_id=303

[2] Հայաստանում ԱՄՆ դեսպանության տվյալներով՝ կաթոլիկների թվաքանակը մեզ մոտ հասնում է 100 հազարի, Кард. Бертоне в Армении: надежда католиков - интервью со священником Петросом Ясаянем, *http://www.wwjd.ru/news/catholic/Kard-Bertone-v-Armenii-na/, 07.03.2008*

[3] Католики армянского обряда, http://www.catholic.su/node/48

վում, Աբինսկում, Սոչիում, Ադլերում[1] և այլ քաղաքներում։

Լատինական Ամերիկայի Առաքելական եպիսկոպոսություն. 20 տարվա պատմություն ունեցող այս թեմը հիմնադրվել է 1989թ. Հովհաննես Պողոս Բ պապի կողմից։ Կենտրոնը Սան Պաուլոյում է։ Բացառությամբ Արգենտինայի, որն առանձին եպիսկոպոսության աստիճան ունի, այս թեմի մեջ են մտնում լատինաամերիկյան բոլոր, ներառյալ Մեքսիկայի հայ կաթոլիկները, որոնց ընդհանուր թվաքանակը 12 հազար է։ Հայ կաթոլիկների ավելի կազմակերպված համայնքներ կան Ուրուգվայում (Մոնտեվիդեո), Բրազիլիայում (Սան Պաուլո)։

Հայկական ինքնության պահպանման առումով բրազիլաբնակ հայ կաթոլիկ համայնքն ավելի գործուն դերակատարում ունի։ Հիմնվել են մշակութային՝ թատերական, երիտասարդական-պատանեկան, մարզական խմբակներ, երգչախմբեր։ Համայնքային կյանքից մեկուսի ապրող սակավաթիվ հայ կաթոլիկները ցրված են Հարավային Ամերիկայի երկրներում (մասնավորապես Վենեսուելայում, Պարագվայում, Մեքսիկայում), և նրանց մոտավոր թիվը որոշելը դժվար է։

Լատինական Ամերիկայի հայ կաթոլիկ թեմ կա *Բուենոս Այրեսում։* Դա *Սբ. Գրիգոր Նարեկացու եպիսկոպոսությունն* է՝ հիմնադրված 1989թ.։ Վատիկանի տվյալներով՝ Արգենտինայում հաշվվում է 16 հազար հայ կաթոլիկ։ Զարմանալի է, որ այդ թվաքանակը քսան տարիների ընթացքում անփոփոխ է մնացել։ Դա բացատրվում է նրանով, որ հայ կաթոլիկների մի քանի սերունդ կամ ձուլման ճանապարհով հեռացել են իրենց համայնքից, կամ էլ վերադարձել են Առաքելական եկեղեցու գիրկը։ Դրան նպաստել է նաև Արգենտինայի տնտեսական ճգնաժամը (արտագաղթ ԱՄՆ)։

Համայնքն ունի մեկ դպրոց՝ Մխիթարյան վարժարանը, որն այդ երկրում կեսդարյա պատմություն ունի։ Թեմի ջանքերով է հրատարակվում նաև «Վարդանանք» ժողովրդապետական տեղեկագիրը, որն անդրադառնում է հայ կաթոլիկ համայնքի խնդիրներին, մշակութային կյանքին։ Գործում են մշակութային՝ արվեստի, պարի խմբակներ, ստեղծագործական միավորումներ։ Որքան էլ վերոհիշյալ գործոնները նպաստավոր լինեն համայնքի պահպանմանը, այնուհանդերձ, իրատեսական է թվում, որ Արգենտինայի հայ կաթոլիկ համայնքը բավարար նախադրյալներ ունի ձուլվելու դավանակից արգենտինացիներին։

[1] *Н.Шахназарян,* Армяне Краснодарского края, Сборник информационно-методических материалов, Краснодар, ЮРРЦ, с. 6, 2008.

Իրաք. Բաղդադի արքեպիսկոպոսություն. Իրաքի ոչ մեծ հայ կաթոլիկ համայնքը ձևավորվել է 17-18-րդ դդ.: Հայերին դավանափոխելու մեծ աշխատանք ծավալեցին կաթոլիկ միսիոներները:

Հիմնականում արաբախոս իրաքաբնակ հայ կաթոլիկ համայնքի կենտրոնը մշտապես գտնվել է Բաղդադում, որտեղ շուրջ 18 տարի գործում է համայնքապատկան եկեղեցին: Այստեղ խնդիրները փոքր-ինչ այլ են՝ պայմանավորված իրաքյան պատերազմով: Մինչև պատերազմը հայ կաթոլիկների թիվը գերազանցում էր երկու հազարը: Պատերազմական օրերին Բաղդադի հայ կաթոլիկ եկեղեցին բոլոր իրաքաբնակ հայերի (անկախ դավանանքից) հավաքատեղին էր[1]:

Սակայն քրիստոնեական փոքրամասնությունների դեմ իսլամական ծայրահեղականների հարձակումները խաթարեցին հայ կրոնական երկու համայնքների բնականոն կյանքը: Մի քանի հայ կաթոլիկների սպանությունը պատճառ դարձավ, որ հարյուրի հասնող արաբախոս հայ կաթոլիկներ գաղթեն Սիրիա և Լիբանան: Իրաքի հայ կաթոլիկ համայնքը կարելի է դասել փոքր համայնքների շարքին, որը ծանր օրեր է ապրում, ինչպես և ողջ Իրաքի հայությունը:

Թուրքիա, Ստամբուլի արքեպիսկոպոսություն. երբ 1830թ. սուլթան Մահմուդ 2-րդի հատուկ հրովարտակով Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայ կաթոլիկները ճանաչվեցին առանձին համայնք (միլլեթ), Պոլսում ստեղծվեց թեմ, որը գործեց ավագ թեմի կարգավիճակով:

Թուրքիայի Հանրապետությունում հայ կաթոլիկների համայնքային կյանքը ի սկզբանե կենտրոնացված է եղել Ստամբուլում: Շուրջ 60 ընտանիքի հասնող մի հատված էլ ապրում է Անկարայում: Վերջիններս բավական թույլ կապեր ունեն տեղի ոչ կաթոլիկ հայերի հետ[2]: Սա լուրջ խնդիր է, և հարկ ենք համարում նշել, որ այս ամենը պատմական հիմք ունի[3], որը հետզհետե խորանալով՝ մեծ ճեղք է թողել երկու հայ կրոնական համայնքների միջև: Անկարայի հայ կաթոլիկ համայնքը շարունակում է վարել բավական մեկուսի, ինքնամփոփ կենսակերպ: 1970-ական թթ. տեղի հայ կաթոլիկ համայնքի անդամների թիվը 14 հազար էր[4], սակայն այսօր այն

[1] Иракские армяне живут в страхе из-за участившихся нападений на христиан, http://newsru.com/arch/religy/09sep2003/iraq_armen_save.html

[2] Komşuoğlu A., Türkiye Ermenilerinin Siyasal Tutum ve Davranışları Üzerine Notlar, Istanbul Universitesi, SBF Dergisi, 62/1, , Istanbul, 2006, s. 151

[3] Խոսքը երկար տարիներ տևած դավանաբանական վեճերի մասին է Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների և հայ կաթոլիկների միջև, ինչն էլ հայ կաթոլիկ համայնքի առաջացման նախադրյալը դարձավ :

[4] Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 163:

հասնում է 3 հազարի: Մի շարք ոչ հավաստի տվյալներով՝ նրանց թիվը 25 հազար է[1], ինչը խիստ անհավանական է թվում, քանի որ 3 հազար թիվը կամ մի փոքր ավելին Վատիկանի պաշտոնական վիճակագրական տվյալներն են: Թվերի ուռճացման հարցում Վատիկանը ամենաակտիվներից է՝ փորձելով հետևորդների մեծաթվությամբ ապահովել իր եկեղեցու գերակայությունն այլ եկեղեցիների նկատմամբ: Այնպես որ, վերջինիս տվյալներն ավելի արժանահավատ աղբյուր են հանդիսանում, ինչը երբեմն շրջանառվում է թուրքական գիտավերլուծական հոդվածներում[2]:

Մեր դիտարկումներից ելնելով՝ փաստենք, որ թուրքական տեղեկատվական դաշտում այս համայնքի ներկա գործունեության մասին շատ կցկտուր և հակասական տեղեկություններ են պարունակվում: Մասնավորապես, Թուրքիայի տարածքում բնակվող հայերի մասին քննարկումները սահմանափակվում են կամ բուն հայկական համայնքի, կամ իսլամացած, ծպտյալ հայերի խնդիրներով, իսկ կաթոլիկների պարագայում՝ նրանց թվաքանակի նշմամբ:

Ստամբուլում, որն այսօր տեղի հայ կաթոլիկների հոգևոր կենտրոնն է, գործում է 12 հայ կաթոլիկական եկեղեցի, մեկ եկեղեցի կա Մարդին քաղաքում, որտեղ հայ կաթոլիկներ այլևս չկան: Գործում են Մխիթարյան միաբանության ենթակայության տակ գտնվող նախակրթարաններ, երկսեռ վարժարաններ: Բարեգործական հաստատություններից հիշատակման են արժանի Սուրբ Հակոբ բարեգործական մարմինը, Սուրբ Հակոբ հիվանդանոցը, Սուրբ Հակոբ բուժիմնարկությունը, որոնք բոլորն էլ համայնքապատկան կառույցներ են: Անկարայի հայ կաթոլիկները, սակայն, հաղորդակից չեն համայնքի կյանքին, անգամ եկեղեցի հաճախելու հնարավորություն չունեն:

Տարբեր երկրներում հիմնված հայ կաթոլիկ համայնքների ներկայիս վիճակն ուսումնասիրության կարիք ունի: Պետք է փորձել որոնել այս համայնքները պահպանելու միջոցներ և ուղղություններ: Մոտեցումները պետք է հստակեցվեն ըստ էության, հաշվի առնելով, որ դրանցից յուրաքանչյուրն ապրում է տարբեր մշակույթներով ձևավորված արժեհամակարգերում: Անհրաժեշտ է նաև զանազանել այն, որ հայ կաթոլիկների խնդիրները հիմնովին տարբերվում են այլ կրոնական պատկանելություն ունեցող շերտերի խնդիրներից. օրինակ, իսլամացված հայերի պարագան հայ իրականության մեջ առանձնահատուկ է:

[1] http://i-cias.com/e.o/turkey.religions.htm

[2] Murat Cano, Istanbul ve Türkiye Azınlık Hayatları Ya da Olivo'dan " Vıy Lo" Sokağına, Türkiye Mühendislik Haberleri, Sayı 413, Istanbul, 2001, s.45

Վատիկանի տարեկան պաշտոնական վիճակագրության հիման վրա ստորև ներկայացնում ենք հայ կաթոլիկ թեմերը, որտեղ, ըստ տարիների, ներկայացված է նաև թեմի անդամների թվաքանակը։

Հայ կաթոլիկներն աշխարհում[1]

Թեմեր	1990թ.	2000թ.	2005թ.	2007թ.	2008թ.
Պատրիարքարան, Բեյրութ, Լիբանան	15,000	12,000	10,000	12,000	12,000
Սպահանի եպիսկոպոսություն, Իրան	2200	2200	10,000	10,000	10,000
Բաղդադի եպիսկոպոսություն, Իրաք	2200	2000	2000	2000	2000
Ալեքսանդրիայի եպիսկոպոսություն, Եգիպտոս	1500	1287	1276	6000	6000
Հալեպի արքեպիսկոպոսություն, Սիրիա	15,000	17,000	17,000	17,000	17,500
Կամիշլիի եպիսկոպոսություն, Սիրիա	4303	4000	4000	4000	4000
Դամասկոս, պատրիարքական էքզարքություն, Սիրիա	4000	4000	4500	4500	4500
Ստամբուլի արքեպիսկոպոսություն, Թուրքիա	3700	3680	3670	3640	3650
Ման, Երուսաղեմի պատրիարքական փոխանորդություն	---	280	740	800	800
Լվովի եպիսկոպոսություն, Ուկրաինա	---	---	----	0	0
Փարիզի Սուրբ խաչ եպիսկոպոսություն, Ֆրանսիա	30,000	30,000	30,000	30,000	30,000
Աթենքի օրդինարիատ, Հունաստան	650	600	400	400	350
Լատինական Ամերիկայի և Մեքսիկայի Առաքելական եպիսկոպոսություն	30,000	12,000	12,000	12,000	12,000
Բուենոս Այրեսի Սբ. Գրիգոր Նարեկացու եպիսկոպոսություն, Արգենտինա	----	16,000	16,000	16,000	16,000
Գեռլայի օրդինարիատ, Ռումինիա	---	1000	515	842	806
Նյու Յորքի եպիսկոպոսություն, ԱՄՆ և Կանադա	34,000	36,000	36,000	36,000	36,000
Արևելաեվրոպական թեմ, Գյումրի	---	220,000	220,000	220,000	390,000
Ընդհանուր[2]	142,853	362,047	368,101	375,182	539,806

[1] The Eastern Catholic Churches 2008, Source:Annuario Pontificio, The Armenian Catholic Church Patriarchat, http://www.cnewa.org/source-images/Roberson-eastcath-statistics/eastcatholic-stat08.pdf

[2] Այստեղ ներկայացված չէ Ավստրալիայի հայ կաթոլիկ համայնքը՝ մոտ հազար մարդ։ Աղյուսակում տեղ չեն գտել նաև Ավստրիայի, Իտալիայի, Հունգարիայի փոքրաթիվ հայ կաթոլիկ համայնքների տվյալները։

ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԻ «ՍՈՎՈՐԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻՆ 2000-2007ԹԹ.» ԶԵԿՈՒՅՑԸ

Կարեն Վերանյան

2008թ. հոկտեմբերի 23-ին լույս տեսավ ԱՄՆ Կոնգրեսի հետազոտական խմբի պատրաստած «Սովորական սպառազինության մատակարարումները զարգացող երկրներին 2000-2007թթ.» զեկույցը, որի ակտուալությունը մերօրյա աշխարհաքաղաքական, համաշխարհային ռազմականացման արագացված գործընթացներում ավելի քան կարևորվում է: Զեկույցը տարեկան հաշվետվություն է՝ հիմնված պաշտոնական տվյալների վրա: Այն ամբողջությամբ նվիրված է վերջին 7 տարիների ընթացքում սպառազինությունների համաշխարհային մատակարարումներին և ևս մեկ անգամ փաստում է գլոբալ ռազմական մրցավազքի արագացման միտումների մասին: Զեկույցում ներկայացված է վերջին տարիներին սպառազինություն մատակարարող առաջատար երկրների՝ տարբեր տարածաշրջաններին ու զարգացող երկրներին սպառազինությունների մատակարարման մասին տեղեկատվության վիճակագրական վերլուծականը:

Սովորական սպառազինության մատակարարումները զարգացող երկրներին 2000-2007թթ.

Զեկույցում հիշատակվում է, որ զարգացող երկրները շարունակում են մնալ արտաքին ռազմական առևտրի և ռազմամթերք մատակարարողների ուշադրության կենտրոնում[1]: 2000-2007թթ. զարգացող երկրների հետ սպառազինության մատակարարումների մասին պայմանագրերը կազմել են աշխարհում նման տեսակի ռազմական պայմանագրերի շուրջ 66,6%-ը, ինչը բավական զգալի թիվ է: Իսկ ոչ այնքան վաղ անցյալում՝ 2004-2007թթ.,

[1] «Զարգացող երկրներ» կարգը, ըստ զեկույցի, ներառում է աշխարհի բոլոր երկրները, բացառությամբ Միացյալ Նահանգների, Ռուսաստանի, եվրոպական պետությունների, Կանադայի, Ճապոնիայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի: Իսկ ընդգրկված երկրները, ըստ տարածաշրջանների տարանջատման, առանձնացվում են հետևյալ կերպ՝ Ասիա, Մերձավոր Արևելք, Լատինական Ամերիկա և Աֆրիկա:

զարգացող երկրների հետ սպառազինության մատակարարումների մասին պայմանագրերը կազմել են ամբողջ աշխարհում ստորագրված նմանատիպ պայմանագրերի 67.7%-ը. միայն 2007թ. այդ թիվը կազմում էր 70,5%: 2004-2007թթ. զարգացող երկրների սպառազինությունների շուկայում առաջատար դիրքեր ունեին Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը: Այդ ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնությունը նման պայմանագրերի ստորագրումից ձեռք է բերել շուրջ $39,3 մլրդ եկամուտ, ինչը կազմում էր աշխարհում ստորագրված բոլոր նման պայմանագրերի 27,9%-ը: Ի դեպ, այդ ցուցանիշը գերազանցում է Միացյալ Նահանգների համապատասխան արդյունքին. վերջինս 2004-2007թթ. նման պայմանագրերից ձեռք է բերել $34,7 մլրդ եկամուտ: Նկատենք նաև, որ վերջին 4 տարիներին միայն Ռուսաստանի ու ԱՄՆ ցուցանիշները միասին վերցրած կազմել են զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարման մասին բոլոր ստորագրված նման պայմանագրերի ավելի քան կեսը՝ 52,5%:

Զարգացող երկրների հետ 2007թ. սպառազինությունների մատակարարումների մասին ստորագրված պայմանագրերում ԱՄՆ-ը զբաղեցնում է առաջին հորիզոնականը՝ $12,2 մլրդ ցուցանիշով, ինչը կազմում էր բոլոր նման պայմանագրերի 28,8%-ը: Վերջինիս իր ցուցանիշով հաջորդում է Մեծ Բրիտանիան՝ $9,8 մլրդ՝ ընդհանուրի շուրջ 23,2%-ը: Զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերից ստացված եկամուտների արդյունքով բարձր է եղել նաև Ռուսաստանի ցուցանիշը՝ $9,7 մլրդ (23% ընդհանուրում): 2007թ. զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի արժեքը կազմել է շուրջ $42,3 մլրդ, այն դեպքում, երբ մասնավորապես 2006թ. այդ ցուցանիշը $38,1 մլրդ էր:

Սովորական սպառազինության համաշխարհային մատակարարումները 2000-2007թթ.

2004-2007թթ. միջազգային սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի արժեքը ընդհանուր առմամբ կազմել է $208,3 մլրդ, ինչը 29,2%-ով գերազանցում է նախորդ՝ 2000-2003թթ. համապատասխան ցուցանիշին՝ $147,6 մլրդ: ԱՄՆ ցուցանիշը առաջատար դիրք է ունեցել նաև 2007թ. համաշխարհային սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի հաշվարկում՝ ձեռք բերելով $24,8 մլրդ (2006թ.՝ $16,7 մլրդ), ինչը կազմում էր ստորագրված բոլոր նման պայմանագրերի գրեթե

կեսը՝ 41,5%-ը: ԱՄՆ-ին հաջորդում է Ռուսաստանը՝ $10,4 մլրդ (ընդհանուրի 17,3%-ը)[1]: Երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Մեծ Բրիտանիան, որի արդյունքը հաշվվում էր $9,8 մլրդ՝ 2006թ. $4,1 մլրդ-ի փոխարեն: ԱՄՆ, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի՝ համաշխարհային սպառազինությունների մասին պայմանագրերի ստորագրումից ստացված եկամուտները միասին վերցրած կազմել են շուրջ $45 մլրդ՝ կազմելով բոլոր մատակարարողների իրականացրած մատակարարումների պայմանագրերի ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 75,2%:

Ստորև պատկերված գրաֆիկում տրվում է 2000-2007թթ. համաշխարհային սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերի (արժեքի) զարգացման դինամիկան և համեմատականը՝ ըստ զարգացած ու զարգացող երկրների: Հարկ է նշել, որ մասնավորապես 2000-2003թթ. համաշխարհային սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերը նվազման միտում են արձանագրել: 2000-2003թթ. զարգացած և զարգացող աշխարհի հետ ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքն իր բարձրագույն կետն արձանագրել է մասնավորապես 2000թ.՝ հաշվվելով շուրջ $45 մլրդ: Ցուցանիշների կայուն նվազումը խախտվել է 2004թ., երբ զարգացած ու զարգացող երկրների հետ կնքված պայմանագրերը միասին գրանցել են 2000թ. արդյունքը: Ինչ վերաբերում է հաջորդ տարիների վիճակագրությանը, ապա 2000-2007թթ. արձանագրվել է ցուցանիշների կայուն աճ, որտեղ զարգացած ու զարգացող աշխարհի հետ ստորագրված սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերի ընդհանուր արժեքի բարձրագույն ցուցանիշը եղել է 2007թ.՝ կազմելով շուրջ $60 մլրդ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2000-2007թթ. զարգացող աշխարհի հետ ստորագրված սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերը, որպես կանոն, անհամեմատ գերազանցել են զարգացած երկրների հետ կնքված պայմանագրերի թիվը: 2000-2003թթ. զարգացած և զարգացող երկրների հետ ստորագրված պայմանագրերի միջև՝ հօգուտ վերջինիս գրանցված արժեքային առավելությունը չի դրսևորվել զգալի տարբերությամբ (բացառությամբ 2000 թվականի, երբ այդ տարբերությունը շոշափելի պատկեր ունի): Այլ էր պատկերը հաջորդ տարիներին, երբ 2004թ. ի վեր զարգացող երկրների հետ ստորագրված պայմանագրերը, զարգացած աշխարհի համապատասխան ցուցանիշի համեմատ, զգալի աճ են արձանագրել:

[1] 2006թ. Ռուսաստանը համաշխարհային սպառազինությունների մատակարարումներից ստացել էր $14,3 մլրդ եկամուտ:

Գրաֆիկ 1

Սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերը ողջ աշխարհում, զարգացած ու զարգացող երկրների համեմատականը 2000-2007թթ.,ամերիկյան դոլարի 2007թ. փոխարժեքով, $մլրդ



Աղբյուրը՝ ԱՄՆ կառավարություն

Հաջորդ գրաֆիկում տրվում են ողջ աշխարհում ստորագրված սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի արժեքի դինամիկան ու փոփոխությունները 2000-2007թթ.: Ներկայացված վիճակագրությունն ուշագրավ է նաև այն առումով, որ պայմանագրերի զարգացման դինամիկան կարելի է տեսնել մատակարար երկրների օրինակով: Այսպես, 2000-2003թթ. ողջ աշխարհում սույն պայմանագրերի զգալի մասը՝ ըստ մատակարար երկրի, բաժին է ընկել ԱՄՆ-ին՝ կազմելով ընդհանուրի 44,7%-ը: Վերջինիս արդյունքը նույնիսկ բարձր է Արևմտյան Եվրոպայի հիմնական մասի[1], Ռուսաստանի և Չինաստանի ցուցանիշներից՝ միասին վերցրած: Պատկերը որոշակի փոփոխություն է կրում մասնավորապես 2004-2007թթ. վիճակագրությունում, երբ ողջ աշխարհում Միացյալ Նահանգների ստորագրած պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է ընդհանուրի 33,1%-ը: Ի տարբերություն ԱՄՆ-ի ցուցանիշի, այդ տարիներին, 2000-2003թթ. համեմատ, աճել են Չինաստանի, Արևմտյան Եվրոպայի հիմնական հատվածի, ինչպես նաև Ռուսաստանի արդյունքները: Գրաֆիկում տրված մատակարար երկրների շարքում 2004-2007թթ. ամենամեծ

[1] «Արևմտյան Եվրոպայի հիմնական մասը» կարգը ներառում է Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Իտալիան:

աճն արձանագրվել է Արևմտյան Եվրոպայի հիմնական մասում՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ ավելանալով 8,1%-ով և ունենալով լավագույն արդյունքը ԱՄՆ-ից հետո:

Գրաֆիկ 2

Սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերը ողջ աշխարհում՝ ըստ մատակարարող երկրների, %-ային մասնաբաժինը ընդհանուրում, 2000-2003 և 2004-2007թթ.



2000-2003թթ. 2004-2007թթ.

Ծան. «Արևմտյան Եվրոպայի հիմնական մասը» կարգը ներառում է Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Իտալիան:

Գրաֆիկ 3

Սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերը զարգացող երկրների հետ՝ ըստ մատակարարող երկրների, %-ային մասնաբաժինը ընդհանուրում, 2006/2007թթ.



2006թ. 2007թ.

Գրաֆիկները կազմվել են ԱՄՆ կառավարության տրամադրած տեղեկատվության հիման վրա:

Ինչ վերաբերում է պայմանագրերի արժեքի դինամիկային զարգացող երկրներում, ապա այստեղ պատկերն այլ է: 2006թ. զարգացող աշխարհի հետ ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքում, ըստ մատակարար երկրների, ամենաբարձր ցուցանիշը Ռուսաստանինն է (ընդհանուրի 37,9%-ը), որին հաջորդում է ԱՄՆ-ը (24%): Իսկ հաջորդ՝ 2007թ. վիճակագրությունում բարձրագույն արդյունքն արձանագրվել է արդեն Արևմտյան Եվրոպայի հիմնական մասում՝ կազմելով զարգացող երկրների հետ կնքված ընդհանուր պայմանագրերի 32,2%-ը: Վերջինիս հաջորդում են ԱՄՆ-ը (28,8%) և Ռուսաստանը (23%) (*տե՛ս գրաֆիկ 3, աղյուսակ 1)*:

Աղյուսակ 1

Սպառազինությունների համաշխարհային մատակարարումների մասին պայմանագրերը 2000-2007թթ. և մատակարարողների մասնաբաժինը զարգացող երկրների հետ կնքված պայմանագրերում, ամերիկյան դոլարի 2007թ. փոխարժեքով, $ մլն

Մատակարար երկիր	*Համաշխարհային պայմանագրերի արժեքը 2000-2003թթ.*	*Զարգացող երկրների հետ, տոկոսային մասնաբաժինը ընդհանուրում*
ԱՄՆ	65,948	70,40
Ռուսաստան	26,610	96,00
Ֆրանսիա	13,656	36,30
Մեծ Բրիտանիա	2,919	39,50
Չինաստան	3,164	100,00
Գերմանիա	6,660	21,80
Իտալիա	2,677	26,00
Մնացյալ բոլոր եվրոպական երկրները	15,601	38,20
Մյուս բոլորը	10,322	64,90
Ընդհանուր	**147,558**	**65,10**
Մատակարար երկիր	*Համաշխարհային պայմանագրերի արժեքը 2004-2007թթ.*	*Զարգացող երկրների հետ, տոկոսային մասնաբաժինը ընդհանուրում*
ԱՄՆ	68,886	50,40
Ռուսաստան	40,940	96,00
Ֆրանսիա	18,440	53,50
Մեծ Բրիտանիա	23,506	90,70
Չինաստան	9,383	100,00
Գերմանիա	7,199	61,10
Իտալիա	4,367	61,90
Մյուս բոլոր եվրոպական երկրները	23,421	44,70
Մյուս բոլորը	12,202	72,80
Ընդհանուր	**208,344**	**67,70**

Ինչպես պատկերված է *Աղյուսակ 2-ում,* սպառազինությունների համաշխարհային մատակարարումների մասին ստորագրված պայմանագրերում, ըստ առաջատար 11 մատակարար երկրների, 2000-2007թթ. Միացյալ Նահանգներն իրականացրել է առավելագույն՝ շուրջ $123 մլրդ գումարի գործարքներ, որին գրեթե կրկնակի զիջում է Ռուսաստանը՝ $62,2 մլրդ: Նշված ժամանակաշրջանում համեմատաբար բարձր են եղել նաև Ֆրանսիայի ($29,2 մլրդ), Մեծ Բրիտանիայի ($25,2 մլրդ) ու Գերմանիայի ($12,6 մլրդ) արդյունքները: Առաջատար մատակարար երկրների հնգյակին անմիջապես հաջորդում են Չինաստանն ու Իսրայելը, որոնք այդ գործարքներից համապատասխանաբար ձեռք են բերել $11,8 և $10,8 մլրդ եկամուտ: Առաջատար մատակարար երկրների ցուցակում ընդգրկված է նաև Ուկրաինան՝ միակ ԱՊՀ անդամ պետությունը, որի ցուցանիշը կազմել է $5,5 մլրդ:

Աղյուսակ 2

Սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերը աշխարհի հետ 2000-2007թթ.՝ ըստ առաջատար մատակարար երկրների, $մլն (ամերիկյան դոլարի ներկայիս փոխարժեքով)

Դիրքը	Մատակարար երկիրը	Պայմանագրերի ընդհ. արժեքը, $մլն	Դիրքը	Մատակարար երկիրը	Պայմանագրերի ընդհ. արժեքը, $մլն
2000-2007թթ.			2007թ.		
1	ԱՄՆ[1]	122,951	1	ԱՄՆ	24,860
2	Ռուսաստան	62,200	2	Ռուսաստան	10,400
3	Ֆրանսիա	29,200	3	Մեծ Բրիտանիա	9,800
4	Մեծ Բրիտանիա	25,200	4	Չինաստան	3,800
5	Գերմանիա	12,600	5	Իսպանիա	2,000
6	Չինաստան	11,800	6	Ֆրանսիա	1,800
7	Իսրայել	10,800	7	Գերմանիա	1,500
8	Իտալիա	6,500	8	Իսրայել	1,000
9	Իսպանիա	6,500	9	Իտալիա	900
10	Ուկրաինա	5,500	10	Հարավային Կորեա	500
11	Շվեդիա	5,400	11	Շվեյցարիա	400

Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում նաև սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի վիճակագրության վերլուծությունն ըստ առանձին տարածաշրջանների: 2000-2007թթ.

[1] Միացյալ Նահանգների 2000թ. ընդհանուր ցուցանիշում ներառված է Միացյալ Արաբական Էմիրությունների հետ 80 միավոր F-16 տեսակի ռմբակոծիչների մատակարարման մասին ստորագրված $6,432 մլրդ արժողության արտոնագրված առևտրային պայմանագիրը *(licensed commercial agreement):*

աղյուսակում տրված մատակարար երկրների շարքից ասիական տարածաշրջանի հետ ստորագրված սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի արժեքի առավելագույն ցուցանիշով առանձնացել է Ռուսաստանը: Վերջինիս արդյունքը 2000-2003թթ. գնահատվում էր շուրջ $17,500 մլրդ՝ կազմելով այդ տարածաշրջանի հետ կնքված նման պայմանագրերի ընդհանուր արժեքի գրեթե կեսը՝ 49,7%-ը: 2004-2007թթ. վիճակագրությամբ, թեև Ռուսաստանի համապատասխան ցուցանիշն արդեն կազմում էր 36%[1], այնուհանդերձ, նման պայմանագրերի արժեքի համատեքստում պահպանեց առաջատարի իր դիրքերը: Այդ ժամանակահատվածում ասիական տարածաշրջանի հետ կնքված սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի արժեքում Ռուսաստանի ցուցանիշին հաջորդում է ԱՄՆ-ը:

Աղյուսակ 3

Սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերը առանձին տարածաշրջանների հետ՝ ըստ մատակարար երկրների 2000-2007թթ., $մլն (ամերիկյան դոլարի ներկայիս փոխարժեքով)

Երկիր	Ասիա		Մերձավոր Արևելք		Լատինական Ամերիկա		Աֆրիկա	
	2000-2003	2004-2007	2000-2003	2004-2007	2000-2003	2004-2007	2000-2003	2004-2007
ԱՄՆ	6,977	11,092	24,487	20,655	1,191	1,638	94	186
Ռուսաստան	17,500	20,700	3,100	13,100	300	3,600	900	500
Ֆրանսիա	2,700	4,600	1,200	3,600	0	300	100	900
Մեծ Բրիտանիա	400	2,400	500	17,600	0	700	0	0
Չինաստան	1,300	6,000	700	1,800	100	200	600	1,200
Գերմանիա	1,100	1,800	100	1,500	0	1,100	0	0
Իտալիա	200	1,200	100	1,000	200	100	200	300
Եվրոպայի մյուս բոլոր երկրները	2,100	3,900	1,800	2,600	200	2,800	1,000	800
Մյուս բոլորը	2,900	5,900	1,300	1,200	900	800	700	500
Արևմտյան Եվրոպայի հիմնական մասը								
Ընդհանուր	**35,177**	**57,592**	**33,287**	**63,055**	**2,891**	**11,238**	**3,594**	**4,386**

Ծան. Միացյալ Նահանգների՝ 2000-2003թթ. Մերձավոր Արևելքի հետ ունեցած պայմանագրերի շարքում ներառված է Միացյալ Արաբական Էմիրությունների հետ 80 միավոր F-16 տեսակի ռմբակոծիչների մատակարարման մասին ստորագրված $6,432 մլրդ արժողության արտոնագրված առևտրային պայմանագիրը *(licensed commercial agreement):*

[1] Նախորդ ժամանակահատվածի համեմատ, 2004-2007թթ. Ռուսաստանի՝ Ասիայի հետ կնքած նման պայմանագրերի արժեքը աճման միտում է ունեցել, սակայն պայմանավորված ասիական տարածաշրջանի հետ մատակարար երկրների ստորագրած նման պայմանագրերի ընդհանուր արժեքի կտրուկ աճով, Ռուսաստանի տոկոսային մասնաբաժինը նախորդ ժամանակահատվածի համեմատ, տարածաշրջանի ընդհանուր չափաքանակում ավելի ցածր ցուցանիշ չի ներկայացնում:

Ի տարբերություն ասիական տարածաշրջանի, 2000-2007թթ. Մերձավոր Արևելքի հետ ստորագրված նման պայմանագրերի զգալի հատվածը կազմել է ԱՄՆ չափաբաժինը: 2004-2007թթ. վերջինիս արդյունքը կազմում էր տարածաշրջանում ստորագրված նման պայմանագրերի 32,7%-ը[1]: Այն դեպքում, երբ 2000-2003թթ. ԱՄՆ արդյունքը կազմում էր այս տարածաշրջանի հետ կնքված նման ընդհանուր պայմանագրերի ճնշող մեծամասնությունը՝ 73,5% (տարբերությունն ավելի քան կրկնակի է): 2004-2007թթ. այս տարածաշրջանի հետ ստորագրված նման պայմանագրերի ընդհանուր արժեքում ԱՄՆ-ին հաջորդում են Մեծ Բրիտանիան (ընդհանուրի գրեթե 30%-ը) և Ռուսաստանը (20,7%):

Նշված երկու տարածաշրջանների համեմատությամբ, մյուս երկու տարածաշրջանների՝ Լատինական Ամերիկայի ու Աֆրիկայի պարագայում մատակարար երկրների հետ ստորագրված պայմանագրերի արժեքը բավական ցածր է եղել: Լատինական Ամերիկայի հետ կնքված նման պայմանագրերի ընդհանուր արժեքում 2000-2007թթ. բարձր են եղել Միացյալ Նահանգների ($1,191 մլրդ) և Ռուսաստանի ($3.600) ցուցանիշները: Աֆրիկայի հետ սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերի ընդհանուր արժեքը 2000-2003թթ. կազմել է ընդամենը $3,594 մլրդ, իսկ հաջորդ տարիներին՝ $4,386 մլրդ, որտեղ համեմատաբար բարձր են եղել Ռուսաստանի (2000-2003թթ.՝ ընդամենը $900 մլն) ու Չինաստանի (2004-2007թթ.՝ $1,200 մլն) ցուցանիշները:

Կարևոր է նաև նշել, որ 2000-2007թթ. նշված տարածաշրջանների հետ ստորագրված պայմանագրերի արժեքում ամենաբարձր արդյունքը գրանցվել է 2004-2007թթ.՝ Մերձավոր Արևելքի պարագայում ($63,055 մլրդ), որին հաջորդում է ասիական տարածաշրջանը ($57,592 մլրդ՝ կրկին 2004-2007թթ.): Այդ տարածաշրջանների հետ կնքված նման պայմանագրերի արժեքում, ըստ մատակարար երկրների, 2000-2007թթ. կտրվածքով առավելագույն ցուցանիշը պատկանում է ԱՄՆ-ին՝ 2000-2003թթ. Մերձավոր Արևելքի հետ ($24,487 մլրդ):

[1] 2004-2007թթ. Մերձավոր Արևելքի հետ կնքված նման պայմանագրերում ԱՄՆ մասնաբաժնի նվազումը պայմանավորված է նախ նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ վերջին տարիներին այս տարածաշրջանի հետ կնքված նման պայմանագրերի արժեքի գրեթե կրկնակի աճով: Եվ երկրորդ, նախորդ տարիների համեմատ, 2004-2007թթ. ԱՄՆ համապատասխան ցուցանիշն ավելի ցածր արդյունք է ունեցել:

Զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարումների մասին պայմանագրերը՝ ըստ ստացող երկրների

Կարևոր է զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերի վիճակագրության լուսաբանումը՝ ըստ առաջատար ստացող երկրների դասակարգման, ինչը հնարավորություն է տալիս առավել լայն պատկերացում կազմել սպառազինությունների համաշխարհային մատակարարումների արտահոսքերի ու ռազմականացման միտումների վերաբերյալ: Այսպես, 2000-2007թթ. զարգացող երկրների հետ սպառազինությունների մատակարարման մասին ստորագրված պայմանագրերում՝ ըստ ստացող երկրների, առաջատար ցուցանիշ է արձանագրել Հնդկաստանը՝ իրականացնելով $31,9 մլրդ-ի գործարք: Պետք է նկատել, որ 2000-2007թթ. Հնդկաստանի նման բարձր ցուցանիշները արդյունք են հատկապես վերջին՝ 2004-2007թթ. իրականացված նման տեսակի ընդհանուր գործարքներում այդ երկրի մասնաբաժնի կտրուկ աճի: 2000-2003թթ. համեմատությամբ, երբ Հնդկաստանը զբաղեցնում էր զարգացող երկրների շարքում մատակարարումներ ձեռք բերած առաջատար 10 երկրների ցուցակի միայն երրորդ դիրքը՝ $7,7 մլրդ արդյունքով, 2004-2007թթ. նա գլխավորում է այդ առաջատար երկրների ցուցակը՝ $24,2 մլրդ ցուցանիշով: Նախորդ տարիների համեմատությամբ, 2004-2007թթ. Հնդկաստանի արդյունքն աճել է շուրջ 3,1 անգամ:

2000-2007թթ. զարգացող երկրների շարքում սպառազիններ ձեռք բերած երկրորդ առաջատար պետությունը Սաուդյան Արաբիան է՝ $26,4 մլրդ ցուցանիշով: Ինչպես և Հնդկաստանի պարագայում, Սաուդյան Արաբիայի բարձր ցուցանիշը արդյունք է գերազանցապես 2004-2007թթ. իրականացված գործարքների կտրուկ ավելացման. 2000-2003թթ. համեմատությամբ, այս ժամանակահատվածում Սաուդյան Արաբիայի ցուցանիշն աճել է 8,25 անգամ: Ընդ որում, եթե նախորդ ժամանակաշրջանում այդ երկիրը գտնվում էր զարգացող երկրների շարքում սպառազինությունների մատակարարումներ ձեռք բերած առաջատար տասնյակի 7-րդ դիրքում, ապա հետագա տարիներին, ինչպես նշվեց, երկրորդ հորիզոնականում: 2007թ. Սաուդյան Արաբիան գլխավորում է զարգացող երկրների շարքից սպառազինությունների մատակարարումներ ձեռք բերած առաջատար երկրների տասնյակը:

Սաուդյան Արաբիային իր ցուցանիշով հաջորդում է Չինաստանը, որը նշված ժամանակահատվածում իրականացրել է $16 մլրդ գործարք: Սակայն ի տարբերություն նախորդ երկրների, Չինաստանը բարձր ցուցանիշ է արձանագրել մասնավորապես 2000-2003թթ.՝ $10,1 մլրդ, զբաղեցնելով առաջատար տասնյակի առաջին դիրքը: Իսկ հաջորդ տարիներին Չի-

նաստանն ունեցել է համեմատաբար ցածր ցուցանիշ՝ $5,9 մլրդ (Չինաստանի ցուցանիշը նվազել է 1,7 անգամ)։

Աղյուսակ 4

Սպառազինությունների մատակարարման մասին պայմանագրերը զարգացող երկրների հետ 2000-2007թթ.՝ ըստ առաջատար ստացող երկրների, $մլն (ամերիկյան դոլարի ներկայիս փոխարժեքով)

Դիրքը	Ստացող երկիրը	Պայմանագրերի ընդհ. արժեքը, $մլն	Դիրքը	Ստացող երկիրը	Պայմանագրերի ընդհ. արժեքը, $մլն
2000-2003թթ.			**2004-2007թթ.**		
1	Չինաստան	10,100	1	Հնդկաստան	24,200
2	Միացյալ Արաբ. Էմիր.[1]	9,300	2	Սաուդյան Արաբիա	23,200
3	Հնդկաստան	7,700	3	Պակիստան	12,100
4	Եգիպտոս	6,800	4	Չինաստան	5,900
5	Իսրայել	5,100	5	Եգիպտոս	5,500
6	Հարավային Կորեա	4,700	6	Սիրիա	5,400
7	Սաուդյան Արաբիա	3,200	7	Միաց. Արաբ. Էմիր.	5,000
8	Մալայզիա	3,100	8	Վենեսուելա	4,700
9	Սինգապուր	2,300	9	Իսրայել	4,400
10	Քուվեյթ	2,200	10	Հարավային Կորեա	4,200
2000-2007թթ.			**2007թ.**		
1	Հնդկաստան	31,900	1	Սաուդյան Արաբիա	10,600
2	Սաուդյան Արաբիա	26,400	2	Հնդկաստան	5,000
3	Չինաստան	16,000	3	Պակիստան	4,200
4	Միաց. Արաբ. Էմիր.[2]	14,300	4	Սիրիա	3,700
5	Պակիստան	13,700	5	Հարավային Կորեա	2,700
6	Եգիպտոս	12,300	6	Միաց. Արաբ. Էմիր.	1,900
7	Իսրայել	9,500	7	Իրաք	1,900
8	Հարավային Կորեա	8,900	8	Եգիպտոս	1,700
9	Սիրիա	6,100	9	Օման	1,400
10	Վենեսուելա	4,900	10	Իսրայել	1,000

Աղբյուրը՝ ԱՄՆ կառավարություն

[1] Միացյալ Արաբական Էմիրությունների ընդհանուր ցուցանիշում ներառված է ԱՄՆ-ի հետ 80 միավոր F-16 տեսակի ռմբակոծիչների մատակարարման մասին 2000թ. ստորագրված $6,432 մլրդ արժողության արտոնագրված առևտրային պայմանագիրը *(licensed commercial agreement)*:

[2] Նույնը։

Հավելված 1

Ռազմական տեխնիկայի մատակարարումները զարգացող երկրներին՝ ըստ մատակարար երկրների, 2000-2007թթ.

Ռազմական տեխնիկայի տեսակը	ԱՄՆ	Ռուսաստան	Չինաստան	Արևմտյան Եվրոպա / դեպի Լատինական Ամերիկա	Եվրոպական մյուս բոլոր երկրները	Այլ բոլորը
2000-2003թթ.						
Տանկեր և ինքնագնաց հրանոթներ[1]	462	420	200	390	860	130
Հրետանի	209	440	630	110	630	670
Հետևակի զրահապատ մեքենաներ/APCs/ և զրահապատ մարտական մեքենաներ	60	620	360	90	1,090	560
Խոշոր ռազմանավեր/Major Surface Combatants/	16	5	0	5	2	2
Ռազմանավեր/Minor Surface Combatants/[2]	4	4	40	45	90	92
Հրթիռակիր նավակներ/Guided Missile Boats/	0	0	1	9	0	0
Սուզանավեր	0	1	0	2	2	0
Գերձայնային մարտական ինքնաթիռներ	67	240	70	20	80	70
Մինչձայնային մարտական ինքնաթիռներ[3]	15	10	0	30	10	0
Այլ տեսակի ինքնաթիռներ	53	20	90	130	150	130
Ուղղաթիռներ	121	390	10	70	100	50
«Ցամաք-օդ» տեսակի հրթիռներ	3,017	1,770	550	50	720	540
«Ցամաք-ցամաք» տեսակի հրթիռներ	0	40	0	0	0	40
Հականավային հրթիռներ/Anti-Ship Missiles/	309	170	60	170	0	50
2004-2007թթ.						
Տանկեր և ինքնագնաց հրանոթներ	375	270	150	40	420	30
Հրետանի	239	20	440	10	1,260	750
Հետևակի զրահապատ մեքենաներ/APCs/ և զրահապատ մարտական մեքենաներ	641	510	450	220	1,880	691
Խոշոր ռազմանավեր/Major Surface Combatants/	0	3	0	17	5	17
Ռազմանավեր/Minor Surface Combatants/	21	3	43	48	40	97
Հրթիռակիր նավակներ/Guided Missile Boats/	0	0	0	6	9	1
Սուզանավեր	0	8	0	5	4	0
Գերձայնային մարտական ինքնաթիռներ	104	170	30	70	30	40
Մինչձայնային մարտական ինքնաթիռներ	2	0	0	30	0	10
Այլ տեսակի ինքնաթիռներ	36	20	120	10	70	100
Ուղղաթիռներ[4]	67	180	0	70	30	40
«Ցամաք-օդ» տեսակի հրթիռներ	1,222	2,810	530	10	390	150
«Ցամաք-ցամաք» տեսակի հրթիռներ	0	0	0	0	0	30
Հականավային հրթիռներ/Anti-Ship Missiles/[5]	260	360	120	140	80	20

Աղբյուրը՝ ԱՄՆ կառավարություն

[1] Այս կարգը ներառում է նաև ինքնագնաց հրետանին:

[2] Զեկույցի համաձայն, «Ռազմանավեր» կարգը ներառում է ականազերծող, հակասուզանավային ռազմանավերի, տորպեդոյով զինված մոտորանավակների, ինչպես նաև պարեկային ռազմանավերի տեսակները:

[3] Մինչձայնային մարտական ինքնաթիռներ – անգլ.՝ *«Subsonic Combat Aircraft»:*

[4] «Ուղղաթիռներ» կարգը ներառում է բոլոր տեսակի ուղղաթիռները, թե՛ մարտական և թե՛ տրանսպորտային:

[5] «Հականավային հրթիռներ» կարգը ներառում է այս դասի բոլոր տեսակի հրթիռները, ինչպես, օրինակ, *«Harpoon», «Silkworm», «Styx»* և *«Exocet»* տեսակի հրթիռները:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրաչյա Արզումանյան[*]

Ռազմավարության մասին խոսելիս մշտապես հարկ է հաշվի առնել այն, որ այս ոլորտում գործնականում անհնար է ինչ-որ նոր բան ասել: Արդի ռազմավարական մտքի հիմքում ընկած փիլիսոփայական համակարգերն ու հայեցակարգերը մշակվել են առնվազն երկու հազարամյակի ընթացքում: Պատերազմի և ռազմավարության նոր տեսաբանները (ստրատեգիստները)[1], փորձելով հասկանալ և մեկնաբանել իրենց դիտարկած երևույթները, դիմում են ռազմավարական և ռազմական մտքի հազարամյա ժառանգությանը՝ այնտեղ փնտրելով պատասխանները նոր մարտահրավերների, որոնց հետ բախվում է հասարակությունը: Ներկա ռազմական և քաղաքական իրականությունը հասկանալու փորձերը, հակառակորդին ուսումնասիրելու անհրաժեշտությանը զուգընթաց, պահանջում են ճանաչել նաև սեփական հասարակությունը: Այդ իմացությունը հաղթանակի կարևորագույն տարրն է՝ ճշմարտություն, որ գիտակցում էին արդեն Հին Չինաստանում և որը ձևակերպվել է չինացի մեծ զորահրամանատար, ստրատեգ և մեծ մտածող Սուն Ցզիի *(Sun Tzu)*-ի կողմից:

Սուն Ցզին գրում էր. «Եթե գիտես նրան (հակառակորդին) և գիտես քեզ, մարտնչիր թեկուզ հարյուր անգամ, վտանգ չկա. եթե գիտես քեզ, բայց չգիտես նրան, մի անգամ կհաղթես, հաջորդ անգամ պարտություն կկրես. եթե չգիտես ոչ քեզ, ոչ նրան, ամեն անգամ մարտնչելիս պարտություն կկրես»: Իրեն ճանաչելու համար քաղաքական գործիչը, զինվորականը պարտավոր է իմանալ իր ժողովրդի ռազմավարական մշակույթը, որը բարդ և բազմապլան երևույթ է: Այն ներառում է ժողովրդի պատմությունը, աշխարհագրությունը, ավանդույթները, արժեքները, վարքի կանոնները, սովորությունները, նվաճումներն ու անհաջողությունները, ստեղծվող իրադրությանը նրա հարմարվելու, հիմնախնդիրները լուծելու, ծագած սպառնալիքները հաղթահարելու, ուժ կիրառելու ընդունակությունը և այլն: Ռազմավարական մշակույթը համակում է ողջ ռազմական ոլորտը՝ այն միավորելով մեկ ամբողջի մեջ և պատասխանելով այն հարցերին, թե

[*] ԷՂՀ արտգործնախարարի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

[1] Ռազմավարության՝ որպես գիտության, տեսաբան– հետազոտողներ:

ինչու, երբ և ինչպես են ժողովուրդը և իր զինված ուժերը պատերազմ վարում: Այն ժողովրդի բարոյական արժեքների և բարձրագույն նպատակների արտահայտությունն է:

Ռազմավարությունը քաղաքականություն չէ և ոչ էլ պատերազմ, այլ, ավելի շուտ, կամուրջ է նրանց միջև: Առնչվելով պատերազմի վերին մակարդակներին և լինելով այն միջավայրը, որը թույլ է տալիս քաղաքականության և պատերազմի հարթությունը «միակցել» մեկ ամբողջի մեջ, ռազմավարությունն առանցքային դեր է կատարում ռազմական տեսությունում, որտեղ կատարված սխալը միշտ շատ թանկ է նստում պատերազմող կողմի վրա: Ֆելդմարշալ Կեյտելը մի առիթով նկատել է, որ «մարտավարությունում և օպերատիվ մակարդակում թույլ տրված սխալները կարող են ուղղվել ընթացիկ պատերազմի ընթացքում, այնինչ ռազմավարության սխալները կարող են ուղղվել միայն հաջորդի ժամանակ»: Սա խիստ կարևոր է դարձնում ռազմավարության թեկուզև հիմնական տարրերի հետ ծանոթությունը, աշխարհին այդ թվում և ռազմավարական մտքի ու մշակույթի պրիզմայով նայել կարողանալը: Ստորև կփորձենք հակիրճ դիտարկել ռազմավարության կարևորագույն տարրերից մի քանիսը՝ հենվելով հիմնականում Հին Չինաստանի ռազմական ու ռազմավարական մտքի վրա:

Պատերազմը, ռազմական հակամարտությունը՝ որպես քաղաքական պայքարի տարր և գործիք

Պատերազմը պայքար է, և ողջ դասական ռազմական ու ռազմավարական միտքն այն դիտարկում է որպես պայքարի գործիք քաղաքական հարթությունում: Դրանով իսկ պատերազմը դրվում է դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական պայքարի հետ նույն շարքում: Սուն Ցզին ասում է. «Ամենալավ պատերազմը հակառակորդի մտահղացումները կոտրելն է. հաջորդ տեղում նրա միությունները խափանելն է, հաջորդ տեղում՝ նրա զորքերը ջախջախելը»: Այլ խոսքերով՝ պայքարի առավել ընդունելի մեթոդը հակառակորդին կոտրելն է տեղեկատվական հարթությունում, հոգեբանական, հոգևոր հաղթանակ տանելը, երբ կործանվում է հենց մտահղացումը և հաղթանակը տարվում է գաղափարական, գաղափարախոսական հարթություններում: Եթե այս մեթոդն անիրականանալի է, Սուն Ցզին խորհուրդ է տալիս դիմել դիվանագիտական պայքարի մեթոդներին, երբ հակառակորդը հայտնվում է քաղաքական մեկուսացման մեջ: Ներկայում, գլոբալացման դարաշրջանում, սույն ցանկին անհրաժեշտ է ավելացնել նաև տնտեսական պատերազմն ու մեկուսացումը, որի արդյունավե-

տությունը նույնպես դժվար է գերագնահատել:

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությանը նետված անգամ թռուցիկ հայացքը ցույց է տալիս, թե ինչպես է քաղաքական ու դիվանագիտական դարավոր փորձն օգնում նրան լիովին համապատասխանել ռազմավարական մտքի հրամայականներին՝ քայլ առ քայլ, նպատակասլաց և համառորեն մեկուսացնելով Հայաստանը միջազգային ասպարեզում, աշխարհին պարտադրելով խնդիրների իր պատկերացումներն ու դրանց լուծման ուղիները: Ճիշտ նույն կերպ էլ նկատելի է վերածնված հայոց պետականության անկարողությունը՝ թուրքական դիվանագիտության «թավշյա» և անշշուկ քայլերի հետևում տեսնել թուրքական պետության հզորությունն ու հնարավորությունները, որի ռազմավարական նպատակներն անփոփոխ են մնում:

Սուն Ցզին, ինչպես և հետագա բոլոր ստրատեգները, համառորեն խորհուրդ է տալիս պատերազմին դիմել միայն որպես ծայրահեղ միջոցի, երբ սպառվել են մնացած բոլոր միջոցները. «Դա է այն ուղին, որով պահպանում ես և՛ պետությունը խաղաղության, և՛ բանակն ամբողջության մեջ»: Սա կապված է այն բանի հետ, որ այլ մեթոդների համեմատ՝ «չկա ավելի դժվար բան, քան պայքարը պատերազմում», և, միևնույն ժամանակ, պատերազմը պայքարի ամենավտանգավոր ձևն է՝ անկանխատեսելի հետևանքներով: Պատերազմել համարձակվող կողմը վտանգում է ամեն ինչ և կարող է վճարել ոչ միայն պարտությամբ, այլև պետության կործանմամբ: Այս մասին է վկայում Սուն Ցզիի հայտնի ասույթներից մեկը. «Պատերազմը մեծ գործ է պետության համար, դա կյանքի և մահվան հիմքն է, դա գոյության և կործանման ուղին է»:

Անթույլատրելի է պատերազմի դիմել ցասման, վրեժի, էյֆորիայի և այլնի հետևանքով: Պատերազմի ժամանակ նժարին է դրվում պետության և ժողովրդի ապագան, որոնք հանդես են գալիս որպես բարձրագույն արժեք: Էլիտան, որ թեթևամտորեն է վերաբերվում պատերազմին և պատերազմ է սկսում «իր ցասման» կամ «իր չարության» պատճառով, շատ բան է վտանգում, քանի որ «ցասումը կարող է կրկին հրճվանքի վերածվել, չարությունը կրկին կարող է ուրախության վերածվել, բայց կործանված պետությունը կրկին չի վերածնվի, մեռածները վերստին չեն վերակենդանանա»:

Անթույլատրելի է նաև պատերազմի դիմել և բանակի առջև այնպիսի խնդիրներ դնել, որոնք չեն կարող լուծվել ռազմական ճանապարհով: Ինչպես ասում է Կլաուզևիցը, «...քաղաքականությունը չի կարող պատերազմին ներկայացնել անիրականանալի պահանջներ. դա կհակասեր միանգամայն բնական և անհրաժեշտ նախադրյալին, թե գիտե այն գործիքը, որից ցանկանում է օգտվել»:

Պատերազմի նպատակները և արդյունքների գնահատման սանդղակը

Այսպիսով, ռազմական արվեստի և ռազմավարության գագաթնակետը հաղթանակի հասնելն է առանց թեժ պատերազմ սանձազերծելու: Դրան կարելի է հասնել՝ հակառակորդին այնպիսի վիճակի մեջ դնելով, երբ պայքարը և բացահայտ պատերազմն անօգուտ են թվում և ավելի նախընտրելի է համարվում անձնատուր լինելը: Որպեսզի սա հնարավոր լինի, ինչպես ընդհանրապես քաղաքական էլիտան, այնպես էլ զորահրամանատարն ինքը պետք է տիրապետեն ռազմավարական արվեստին ու կատարելապես հասկանան և ուղղորդեն փոփոխությունների ու վերափոխումների գործընթացը, ինչի մասին կխոսենք ստորև: Խիստ հազվադեպ է պատահում, որ ռազմավարական արվեստին տիրապետելը հասնի կատարելության, և պատերազմների մեծ մասը, վերջին հաշվով, հանգեցվում է թեժ պատերազմի, երբ արդյունքը որոշում է կողմերի մարտական բախումը:

Ի՞նչ նպատակով պետք է վարվեն պատերազմները, հանուն ինչի՞ է մղվում պայքարը և ինչպե՞ս գնահատել դրա արդյունքները: Պատերազմը «պայքար է շահի համար: Շահ ստանալն էլ հենց հաղթանակն է»: Այսպիսով, պատերազմի նպատակը ոչ թե հաղթանակն է, որը միջոց է, այլ շահ ստանալը, որը միակ չափանիշն է, որ թույլ է տալիս գնահատել ապագա ռազմական կամպանիայի ընդունելիությունը կամ դրա արդյունքները:

Պատերազմի նկատմամբ նման մոտեցումը բացատրելի է դարձնում այն, թե ինչու է չինական ռազմական միտքը հանդես գալիս ձգձգված պատերազմի դեմ. «պատերազմում լսել ենք հաջողության մասին, որովհետև այն արագ էր, եթե նույնիսկ այն անհմուտ էր վարվել, և չենք տեսել դեռ հաջողություն նրա երկարատևության պատճառով, եթե նույնիսկ հմտորեն է վարվել»: Ընդ որում՝ Սուն Ցզին վկայակոչում է շահ հասկացությունը, որն անխուսափելիորեն կապվում է հակադիր հասկացության՝ վնասի հետ: Այս երկու հասկացությունների դիալեկտիկական փոխհարաբերություններն էլ որոշում են ռազմական կամպանիայի ընթացքը. «Դեռ երբեք չի եղել այնպես, որ պատերազմը երկար շարունակվի, և դա շահավետ լինի պետության համար: Ուստի, նա, ով մինչև վերջ չի հասկանում պատերազմի ողջ վնասը, չի կարող մինչև վերջ հասկանալ նաև ողջ շահը պատերազմից»: Ձգձգված պատերազմի օբյեկտիվ հետևանք են դառնում ֆինանսական խնդիրների առաջացումը, երկրի տնտեսական հիմքի քայքայումը և սնանկացումը: Շահի և վնասի տեսակետից տրված գնահատականը հանգեցնում է այն եզրակացության, որ պատերազմ վարելու առավել շահավետ եղանակն արագ ներխուժումն է հակառակորդի տարածք:

Պատերազմի նախապատրաստություն
Սոցիալական համատեքստ. նյութական ապահովում

Պատերազմը պետք է մանրակրկտորեն պատրաստվի, ընդ որում՝ առանձնացնում են պատրաստության երկու կողմ՝ քաղաքական և ռազմական: Քաղաքական պատրաստությունը պահանջում է հասնել հասարակական համաձայնության ապագա պատերազմի վերաբերյալ, երբ «ժողովրդի մտքերը նույնն են տիրակալի մտքերի հետ, երբ ժողովուրդը պատրաստ է նրա հետ միասին մեռնել, նրա հետ միասին ապրել, երբ նա ոչ վախ ունի, ոչ կասկած»: Հանրային մեծամասնության աջակցությունից բացի, կարևոր է հասնել ուղղահայաց կոնսենսուսի հասարակության մեջ, երբ հասարակության բոլոր շերտերն ու սոցիալական խավերը պատրաստ են աջակցել ապագա ռազմական գործողությանը. «հաղթում են այնտեղ, որտեղ վերիններն ու ստորիններն ունեն միևնույն ցանկությունները»:

Մեծ նշանակություն է տրվում ապագա պատերազմի նյութական և զինական ապահովմանը: Անմիջապես մարտական պատրաստությանն են վերաբերում մարտունակության բարձրացման, բանակային ստորաբաժանումների փոխգործակցության ու ներդաշնակեցման խնդիրները, ինչին անհնար է հասնել առանց հրամանատարական և կառավարման հղկված համակարգի:

Խիստ կարևոր դեր է հատկացվում զորահրամանատարի ճիշտ ընտրությանը, ով «պետության գանձն է»: Բոլոր դարաշրջանների և ժողովուրդների ռազմական միտքը գլխավոր հրամանատարին համարում է պետության ռազմական կառույցի առանցքային դեմքը: «Ուստի, զորահրամանատարը, որ հասկանում է պատերազմը, ժողովրդի ճակատագրերի տիրակալն է, պետության անվտանգության տերը»: Ներկայում, պատերազմի բարդացմանը զուգընթաց, նրա դերը միայն էլ ավելի է կարևորվում: Արդյունքը պետք է դառնա բանակի վերածումը մեկ ռազմական օրգանիզմի՝ հզոր և սրընթաց, որի պատրաստվածության ձևից շատ բանով կախված կլինի ռազմական կամպանիայի հաջողությունը:

Պատերազմի պլանի մշակումը

Պատերազմին պատրաստվելը ներառում է նաև պատերազմի պլանի մշակումը, որը պատրաստվում է «իշխանի պալատում», այսինքն՝ ռազմական խորհրդի կողմից, որտեղ ընդգրկվում են բարձր աստիճանավորները: Պլանը պարունակում է ինչպես իրենց, այնպես էլ հակառակորդի ռազմավարական հնարավորությունների, որոնք Սուն Ցզին անվանում է «հաշ-

վարկներ», գնահատականը: Ընդ որում՝ կարևոր դերը պատկանում է հետախուզական տեղեկատվությանը և գործակալական ցանցին, որի առկայությունն ապագա հաղթանակի լավ գրավական է: Նման ցանցի առկայությունը թույլ է տալիս հակառակորդի մասին «նախօրոք գիտելիք» ստանալ, ինչը թույլ է տալիս ավելի ճշգրիտ կատարել հաշվարկները: Սուն Ցզին անգամ դասակարգում է մտցնում և խոսում է լրտեսների «հինգ կարգերի» մասին, որոնցից ավելի արժեքավոր է համարում նրանց, ովքեր աշխատում են հակառակորդի պետական կառավարման համակարգում: Հսկայական նշանակություն է տրվում ռազմավարական գնահատականին: «Նա, ով դեռ մինչև մարտը հաղթում է նախնական հաշվարկով, նրա հնարավորություններն ավելի մեծ են, նա, ով դեռ մինչև մարտը չի հաղթում հաշվարկով, նրա հնարավորությունները քիչ են: Նա, ով շատ հնարավորություններ ունի, հաղթում է, ում հնարավորությունները քիչ են, չի հաղթում, մանավանդ նա չի հաղթում, ով ընդհանրապես հնարավորություն չունի: Ուստի, ինձ համար, միայն սա նկատի ունենալով, արդեն պարզ են հաղթանակն ու պարտությունը»: Նման միտք է հայտնում Լիդլ Հարթը, ով ռազմավարությունը սահմանում է որպես «ռազմական միջոցների բաշխման և կիրառման արվեստ քաղաքականության նպատակների իրականացման համար»: Այնուհետև ավելացնում է. «Ռազմավարությունը կախված է հաջողությունից, առաջին հերթին և ամենից շատ՝ նպատակների ու միջոցների հաշվարկումից ու համակարգումից»:

Զորահրամանատարի (հրամկազմի) դերը

Այն բանից հետո, երբ իրականացված է ռազմական կամպանիայի քաղաքական ու ռազմական պատրաստությունը, պետության ռազմական կառույցը պատրաստ վիճակում է, մշակված է ապագա կամպանիայի պլանը, այդ ժամանակ երկիրն անմիջականորեն պատրաստ է «զինված պայքարին»: Եվ այստեղ չափազանց կարևոր է դառնում զորահրամանատարի դերը, ով ռազմական կամպանիայի ժամանակ պետք է բացառիկ լիազորություններ և որոշումներ կայացնելու ազատություն ունենա: Սա նշանակում է, որ քաղաքական ղեկավարության՝ ռազմական կամպանիայի վրա ազդելու հնարավորությունները սահմանափակվում են իրավիճակի ռազմավարական գնահատականի և ապագա կամպանիայի պատրաստության փուլով: Ինչից հետո «տիրակալը գործում է իր խորհրդում և տրվում է կառավարման գործերին, իսկ պատերազմի համար հարցնում է իր զորահրամանատարին»: Այսինքն՝ ռազմական կամպանիայի

օպերատիվ հրամանատարության և կառավարման հարցերում Սուն Ցզին խիստ սահմանազատում է անցկացնում բանակի և քաղաքական ղեկավարության միջև, որը չպետք է միջամտի կամպանիայի ընթացքին: Զորահրամանատարը գործում է պատերազմական ժամանակի օրենքներով, որոնք կարող են հակասության մեջ մտնել խաղաղ ժամանակների օրենքների հետ: Նա «պարգևներ է բաժանում՝ չհետևելով սովորական օրենքներին, հրամաններ է արձակում ոչ սովորական կառավարման կարգի համաձայն: Նա ողջ բանակը կառավարում է այնպես, ասես մի մարդու կկառավարեր»: Հին Չինաստանի ռազմավարական արվեստի համաձայն՝ զորահրամանատարի օպերատիվ ինքնուրույնությունը պատերազմի բնույթի հետևանք է, որի անկանխատեսելիությունը և արագընթացությունը բացառում են դրանում քաղաքական ղեկավարության համարժեք մասնակցությունը:

Նման տեսակետ ունի նաև Հելմութ ֆոն Մոլտկեն *(Helmuth Graf von Moltke)*՝ գերմանական բանակի գլխավոր շտաբի պետը 1857-88թթ.: Ըստ նրա՝ պատերազմը պետք է վարվի ռազմական գիտության և արվեստի պահանջների, այլ ոչ թե քաղաքականության շրջանակներում: Մոլտկեն պնդում է, որ թեև քաղաքականությունն է որոշում պատերազմի նպատակները, անգամ կարող է փոխել դրանք ռազմական կամպանիայի ընթացքում, այնուամենայնիվ, այն իրավունք չունի միջամտել դրա անցկացմանը: Պրոֆեսիոնալ զինվորականը և միայն նա պետք է որոշի կոնկրետ ռազմական կամպանիայի ընթացքը, որի անցկացումը պետք է թելադրվի ավելի շուտ պատերազմի, քան որևէ այլ բանի օրինաչափություններով: Զավեշտալին այն է, որ ժամանակին հենց Մոլտկեն է հանդես եկել զինվորականների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պահպանման օգտին, ինչը պետք է ապահովեր հասարակությանը զինվորականների կողմից քաղաքական որոշումների ընդունման և պատերազմ վարելու վրա գերիշխող ազդեցություն ձեռք բերելուց: Ըմբռնելով հասարակության՝ բոլոր հասարակական գործընթացներն իր տրամաբանությանը ենթարկող ռազմականացման ողջ վտանգավորությունը՝ Մոլտկեն նշում էր ռազմական մեքենայի հակակշռի ստեղծման անհրաժեշտության մասին:

Պատերազմի և քաղաքական գործիչների ու զինվորականների փոխհարաբերությունների նկատմամբ սույն մոտեցումը բնորոշ է նաև ԱՄՆ զինվորական իսթեբլիշմենթին, հատկապես գործող բանակում: Ի տարբերություն գործող բանակի՝ ԱՄՆ ռազմական տեսաբանները և վերլուծաբանները կողմնորոշված են դեպի քաղաքական շրջանակների «կարծիքը», որը, իր հերթին, թելադրվում է քաղաքական իրադարձությունների տրամաբանությամբ, այլ ոչ թե ռազմական գիտության պահանջներով:

Զինվորական ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պահպանման և զինված ուժի ու քաղաքականության միջև հստակ սահմանազատման անցկացման ավանդույթն արևմտյան հասարակության երկվության խնդրի վառ արտահայտությունն է: Ամերիկյան հասարակությունը վերլուծելիս բավական դժվար է հասկանալ, թե ով է այնտեղ ձևավորում պատերազմի «դեմքը»՝ քաղաքական առաջնորդնե՞րը, թե՞ զինվորական արվեստին տիրապետող և մարտական գործողություններին մասնակցող զինվորական պրոֆեսիոնալները: Մի շարք պատմաբանների և քաղաքագետների կարծիքով՝ նման երկվության արդյունքն է դառնում ռազմական մեքենայի անարդյունավետությունը, ինչը դիտարկվում է որպես անխուսափելի վարձավճար բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պահպանման դիմաց: Ընդ որում՝ վերահսկողության անհրաժեշտությանը տրվում է բացարձակ կարգավիճակ, ինչը թույլ է տալիս խուսափել էրոզիայից ժամանակի ընթացքում: Դրանով իսկ պատերազմի վարման տրամաբանությունն Արևմուտքում հայտնվում է քաղաքական գործիչների, նշանակում է՝ քաղաքացիական անձանց հսկողության տակ, ովքեր իրավունք են ստանում միջամտել մարտական գործողությունների ընթացքին, պատերազմի կազմակերպման և անցկացման մեխանիզմին, ինչը կարող է հանգեցնել անարդյունավետ ռազմական որոշումների մշակմանը և, համապատասխանաբար, բացասական հետևանքների: Այնուամենայնիվ, «քաղաքացիականներին» է պատկանում սխալի իրավունքը, բանակը չիմանալն ու ճիշտ չհասկանալը, ինչը բնական հետևանքն է այն բանի, որ նրանք զինվորական պրոֆեսիոնալներ չեն:

Մարտական ոգի. մարտական ոգու կառավարումը

Չինական ռազմական ստրատեգիան մեծ նշանակություն է տալիս զորքերի բարոյական վիճակին ու մարտական ոգուն, որը ենթակա է տատանումների: Ընդ որում՝ գնահատականներ պետք է տրվեն հակառակորդի վերաբերյալ և հաշվի առնվի այն, թե ռազմական կամպանիայի որ փուլում եք գտնվում դուք. «առավոտյան ոգով առույգ են, ցերեկը՝ ալարկոտ, երեկոյան մտածում են տուն վերադառնալու մասին: Ուստի նա, ով գիտի պատերազմ վարել, խուսափում է հակառակորդից, երբ նրա ոգին առույգ է և հարվածում է նրան, երբ նրա ոգին ծույլ է կամ երբ նա մտածում է վերադարձի մասին. սա էլ հենց ոգու կառավարումն է»:

Նման կարծիք կա նաև արևմտյան ռազմաստրատեգիական մտածողների մոտ: Մասնավորապես, այդ մասին խոսում է Կլաուզևիցը. «Երբ մենք

խոսում ենք ախոյանի զինված ուժերի ոչնչացման մասին (մենք դա համոզված ընդգծում ենք), մեզ ոչինչ չի պարտավորեցնում սահմանափակել այդ հասկացությունը միայն նյութական ուժերով. մենք հասկանում ենք նաև բարոյական ուժերը, քանի որ բարոյական ու ֆիզիկական ուժերը սերտորեն կապված են և անբաժան մեկը մյուսից»: Իսկ Լիդլ Հարթն ասում է. «Բարոյական ռեսուրսները, ժողովրդի մարտական ոգու բարձրացումը հաճախ նույնպես կարևոր են, ինչպես ուժի կոնկրետ ձևերի տիրապետելը»:

Նման ձևով պետք է իրականացվի «սրտի կառավարումը», այսինքն՝ զգացումներն ու հույզերը, ինչպես նաև ուժը կառավարելը: «Մոտ գտնվելով՝ սպասում են հեռվում գտնվողներին, ուժերի ծաղկուն վիճակում գտնվելով՝ սպասում են հոգնածներին, կուշտ լինելով՝ սպասում են քաղցածներին. սա էլ հենց ուժի կառավարումն է»: Ուժի կառավարումն, այսպիսով, այն է, որ հոգաս զորքերիդ մասին, թույլ չտաս, որ նրանք հոգնեն, միակուռ դարձնես ոգին: Սեփական զինվորների ոգու վրա ազդեցությունն իրականացվում է այդ թվում և նրանց մեջ կատաղություն արթնացնելով: Դա անհրաժեշտ է դարձնում հակառակորդի հանդեպ ատելության զգացումը՝ անկախ դրա բնույթից ու դրդապատճառներից, որոնք երկրորդական են համարվում: Կարևոր են համարվում նաև զինվորների ազահությունը և նյութական շահագրգռությունը ռազմավարի նկատմամբ, ինչը յուրաքանչյուր զինվորի անձնական շահի ինքնատիպ չափիչ է հանդիսանում: Դա ռազմական կամպանիայի օրինական և նույնիսկ անհրաժեշտ տարրն է. «Հակառակորդին սպանում է կատաղությունը, նրա հարստությունները զավթում է ագահությունը»:

Մահվան տեղը

Սուն Ցզին և չինացի ռազմական մտածողները նշել են նաև ոգու միահամուռության և բանակի մարտունակության բարձրացման մեկ այլ եղանակի մասին, այն է՝ բանակը դնել այնպիսի դրության մեջ, որը Սուն Ցզին անվանում է «մահվան տեղ»: Այս հասկացությունը դասական չինական գրականության մեջ վերածվում է մի ամբողջ տեսության: Նրա հիմքում ընկած է հետևյալ միտքը. «Զինվորներիդ նետիր այնպիսի տեղ, որտեղից ելք չկա, և այն ժամանակ նրանք կմեռնեն, բայց չեն փախչի: Եթե նրանք պատրաստ կլինեն մահվան գնալ, ապա ինչպե՞ս, ուրեմն, հաղթանակի չհասնել: Ե՛վ մարտիկները, և՛ այլ մարդիկ նման դրության մեջ լարում են իրենց բոլոր ուժերը: Երբ զինվորները մահացու վտանգի են ենթարկվում, նրանք ոչնչից չեն վախենում, երբ նրանք ելք չունեն, նրանք ամուր են մնում, երբ

խորանում են թշնամու հողերը, նրանց ոչինչ հետ չի պահում, երբ ոչինչ անել հնարավոր չէ, նրանք կռվում են»: «Այդ պատճառով զինվորները, առանց որևէ ներշնչման, զգոն են լինում, առանց որևէ հարկադրման էներգիա են ձեռք բերում, առանց որևէ հորդորի համերաշխ են միմյանց հետ, առանց որևէ հրամանի վստահում են իրենց պետերին»:

Այլ խոսքերով՝ մահվան տեղ ասելով հասկանում են իրավիճակի փաստացի կամ թվացյալ անելանելիության պայմանների ստեղծումը: Նման վիճակի հմուտ կառավարումը, որը թույլ է տալիս խուսափել խուճապից, ապահովում է մարտական ոգու բարձրացումը, համախմբվածությունը (ինչը դժվար է ապահովել այլ մեթոդներով) և լիակատար ենթակայությունը զորահրամանատարին: Սուն Ցզին խորհուրդ է տալիս արհեստականորեն նման իրավիճակ ստեղծել: Եթե, օրինակ, բանակը շրջապատման մեջ է ընկնում և միայն մի նեղ ելք է մնում, ապա այն պետք է փակել: Սուն Ցզին տալիս է հանրահայտ դարձած խորհուրդը. «վերացնել աստիճանները»: «Զորքն առաջնորդելիս հարկավոր է այն դնել այնպիսի պայմանների մեջ, կարծես թե բարձունք ես բարձրացել և աստիճանները հանել են: Զորքն առաջնորդելով և իշխանի հողերը խորանալով՝ վճռական գործողությունների դիմելիս հարկավոր է այրել նավերը և կոտրել կաթսաները»: Երբ գտնվում են մահվան վայրում, ապա, «արագ մարտի նետվելով, ողջ են մնում, այլ ոչ թե արագ մարտի նետվելով զոհվում են»: Դրանով իսկ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում «մահվան վայրը» «կյանքի վայրի» (հաղթանակ տանելու վայրի) վերածելու համար: «Միայն այն բանից հետո, երբ զինվորներին կնետեն կործանման վայր, նրանք կգոյատևեն, միայն այն բանից հետո, երբ նրանց կխցկեն մահվան վայր, նրանք կապրեն, միայն այն բանից հետո, երբ նրանք փորձանքի մեջ կընկնեն, նրանք կկարողանան վճռել մարտի ելքը»:

Սուն Ցզին մահվան վայրում գտնվող բանակը համեմատում է Չանշան լեռան օձի հետ: «Ուստի, նա, ով լավ է պատերազմ վարում, նման է Շուայժանին: Շուայժանը Չանշանի օձն է: Երբ խփում են նրա գլխին, նա խփում է պոչով, երբ խփում են նրա պոչին, նա խփում է գլխով, երբ նրա փորին են խփում, նա խփում է և՛ գլխով, և՛ պոչով»: «Չանշանի օձը» դարձել է այն բանակի խորհրդանիշը, որը կայծակնային արագությամբ պատասխանում է ցանկացած հարվածի, որի մարտական ոգին և ուժը անհնար է կոտրել: Նման բանակում անհետանում է փոխգործողության և փոխըմբռնման խնդիրը, և զինվորները կես խոսքից ու մի հայացքից հասկանում են միմյանց և գործում են որպես մեկ միասնական օրգանիզմ: Նման համախմբվածության հասնելու սկիզբ է դառնում ընդհանուր մահա-

ցու վտանգի գիտակցությունը, որը համերաշխության առավել հուսալի հիմք է հանդիսանում:

Ռազմավարություն

Պաշտպանություն և հարձակում

Ըստ Սուն Ցզիի՝ ողջ ռազմավարությունը ելնում է հաղթանակ տանելու ձգտումից: Սակայն հաղթանակը երկու կողմերի՝ քո և հակառակորդի զինված հակամարտության արդյունքն է: Հաղթանակի հասնելու համար դուք պարտավոր եք հաշվի առնել նաև հակառակորդի դրությունը, երբ հաղթանակը դառնում է երկու բավական ինքնուրույն փոխգործակցող գործընթացների հետևանք: Առաջինը սեփական անպարտելիությանը հասնելն է, երբ հակառակորդի համար անհնար է դառնում ձեզ հաղթելը: Երկրորդ գործընթացը կապված է հակառակորդի և հաղթելու հնարավորության հետ, որը նա ձեզ պետք է տրամադրի: Անպարտելիությունը նշանակում է կատարելության հասցնել սեփական պաշտպանությունը, որը Սուն Ցզին անվանում է պաշտպանության լիակատարություն: Հակառակորդին հաղթելու հնարավորությունն ի հայտ է գալիս քո հարձակվելու կարողության արդյունքում՝ օգտագործելով հակառակորդի բաց թողած ու խոցելի տեղերը: «Անպարտելիությունը պաշտպանություն է, հաղթելու հնարավորությունը հարձակում է»:

Այսպիսով, արդյունավետ պաշտպանությունը թուլության նշան չէ, այլ ուժի, որին բախվելով էլ խափանվում են հակառակորդի ջանքերը: Իսկ կատարյալ պաշտպանությունը, որը ձեզ անխոցելի է դարձնում, ապահովում է անպարտելիությունը: Սակայն միայն անպարտելիությունն ի վիճակի չէ ապահովել հաղթանակը, քանի որ պաշտպանությունն ամփոփված է իր մեջ և նպատակ ունի պահպանել ունեցածը: Այն հարձակում չի ենթադրում, որի օգնությամբ կարելի կլինի ընդլայնել կենսատարածքը, ուստի, լիակատար լինելով՝ այն միևնույն ժամանակ թերի է: «Երբ պաշտպանվում են, նշանակում է՝ ինչ-որ բանի պակաս կա»: Ո՞րն է այդ պակասը, չէ՞ որ դու հասել ես կատարելության, նշանակում է՝ այն չի կարող կապված լինել քեզ ու քո զինված ուժերի հետ: Թերությունը պատերազմի բնույթի հետևանքն է հենց, որը հակամարտություն է, նշանակում է՝ դրանում անպայման հակառակորդ կա, ով պետք է քեզ հնարավորություն ընձեռի հաղթել իրեն. «անպարտելիությունը հենց քո մեջ է, հաղթանակի հնարավորությունը՝ հակառակորդի մեջ»: Այո, պետք է պատրաստ լինել

հաղթելու, սակայն դա անելու հնարավորությունն ընձեռում է հակառակորդը. «ով լավ է մարտնչել, նախ և առաջ իրեն է անպարտելի դարձրել և այդ վիճակում սպասել է, թե երբ կարելի կլինի հաղթել հակառակորդին»: Խոսքն, իհարկե, պասիվ սպասման մասին չէ: Հակառակորդի ընձեռած հնարավորությունը տեսնելու համար դու պարտավոր ես հետևել նրան, «մարտով հետախուզություն» իրականացնել՝ փորձելով հասկանալ ու գնահատել մյուս կողմում տեղի ունեցող գործընթացները: Նպատակն, այսպիսով, այն է, որ, գտնվելով պաշտպանության մեջ և խորացնելով քո պաշտպանվածությունը, ջանալով այն հասցնել կատարելության և անպարտելիության, ակտիվորեն որոնես հակառակորդի խոցելի տեղերը, որոնք հնարավոր կդարձնեն հարձակումը և հաղթանակ տանելը: Այս ըմբռնումը կա նաև Մաքիավելիի պատերազմի սկզբունքներում, որոնք ներկայացված են նրա 1521թ. հրատարակված «Պատերազմի արվեստը» (*Arte della Guerra)* աշխատությունում: «Պատերազմի ժամանակ ոչինչ ավելի կարևոր չէ, քան բարեպատեհ հնարավորությունը լավագույնս օգտագործել կարողանալը»:

Լիության և դատարկության ուսմունքը

Սույն հասկացությունը չինական ռազմական մտածողների մոտ ձևակերպվում է «լիության» (անխոցելիություն) և «դատարկության» (խոցելիություն) մասին ուսմունքի շրջանակներում: Քո խնդիրն է գտնել հակառակորդի դատարկությունը և դրան հակադրել քո լիությունը, այսինքն՝ դառնալ ուժեղ և անխոցելի հենց այն ոլորտում, որտեղ հակառակորդը խոցելի է, և հասնել հաղթանակի: Այս պարագայում քո հարվածը նման է «քարով ձվին հարվածելուն», «լիով դատարկին հարվածելուն», և հաղթանակը կանխորոշվում է քարի ամրության ու ձվի փխրունության բնույթով, ինչը նշանակում է՝ հաղթանակ մինչև մարտն սկսելը: Սա թույլ է տալիս հասկանալ առաջին հայացքից պարադոքսալ թվացող այս արտահայտությունը. «Զորքը, որ պետք է հաղթի, սկզբում հաղթում է, հետո ճակատամարտ որոնում, զորքը, որ դատապարտված է պարտության, սկզբում մարտնչում է, հետո հաղթանակ որոնում»: Այստեղից էլ բխում է հետևությունը հաղթանակներից լավագույնի և զորահրամանատարներից լավագույնի մասին. «Նա, ով տեսնում է հաղթանակը ոչ ավելի, քան այլ մարդիկ, լավից լավը չէ: Երբ մեկը մարտնչելով հաղթանակ է տանում և Երկրի վրա կասեն «լավ է», դա լավից լավը չի լինի»: Լավագույնը նա է, ով «հաղթում է

արդեն հաղթվածին» և նրա հաղթանակը հարված է «քարով ձվին»:

Սակայն ինքը՝ զորահրամանատարը, դրանով իսկ հայտնվում է տարօրինակ վիճակում, քանի որ նրա հաղթանակի մեջ ոչ մի հերոսություն չկա, չկան մեծաթիվ զոհեր, և ողջ ռազմական կամպանիան հեշտ հաղթանակ է հիշեցնում, որով ընդունված չէ հիանալ: Եվ միայն շատ քչերն են ի վիճակի գնահատել նրա արվեստը: «Ում մասին հնում ասում էին, թե նա լավ է մարտնչում, նա հաղթում էր, երբ հեշտ էր հաղթելը»:

Այս հասկացությունն աղերսներ ունի Բասիլ Հարթի հետևյալ մտքի հետ. «...իրական նպատակը ոչ այնքան մարտի ընտրությունն է, որքան այն շահավետ իրավիճակի ստեղծումը, որ եթե այն ըստինքյան չի էլ հանգեցնում լուծման, դրա շարունակությունը մարտի ձևով միանշանակ թույլ է տալիս հասնել դրան: Այլ խոսքերով՝ դիսլոկացիան ռազմավարության նպատակն է»:

Ռազմավարության տարրերը

Սուն Ցզին առանձնացնում է ռազմավարության չորս տարր՝ Ես, Նա (հակառակորդը), Երկինքը (ժամանակը), Հողը (տարածությունը), որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝ հոգևոր, նյութական և աշխարհագրական: Նա միշտ ընդգծում է դրանց կարևորությունը (ասույթը, ուր խոսում է կամ իրեն, կամ հակառակորդի, կամ տեղանքը չճանաչելու մասին): Հատուկ նշանակություն է տրվում առաջին երկու տարրերին (նրա հայտնի ասույթը իրեն, հակառակորդին և արդյունքը ճանաչելու մասին):

Ռազմավարության հոգևոր տարրերին են վերաբերում ժողովրդի բարոյական ոգու վիճակը, ժողովրդի ներսում միասնության առկայությունը, բանակի ոգու և զորահրամանատարի ոգու ու տաղանդի վիճակը: Ռազմավարության նյութական տարրերը ներառում են պետության ռազմական, առաջին հերթին՝ բանակի կառույցը, նրա կազմակերպական կառուցվածքը, մարտական պատրաստության աստիճանը, խրախուսումների ու պատժի համակարգի բնույթը և, վերջապես, բանակի թվաքանակը: Աշխարհագրական տարրերը ներառում են ժամանակը (տարվա եղանակները, օրը, ժամը), եղանակը և լանդշաֆտը (տեղագրությունը):

Չևի հասկացությունը

Ռազմավարության բոլոր տարրերը սերտորեն շաղկապված են և ազդում են մեկը մյուսի վրա, ինչը թույլ չի տալիս դրանք միմյանցից մեկուսացված դիտարկել: Շատ բաներում ոչ միայն իրենք՝ տարրերը, այլև

դրանց կապն ու փոխազդեցությունն են որոշում մարտի ելքը: Դրանք բնութագրելու և այդ փոխկապվածությանն ու փոխազդեցությանը գնահատական տալու համար Սուն Ցզին ներմուծում է «ձևի» հասկացությունը, որը բնութագրում է բանակը որպես մեկ ամբողջություն: Բանակի ձևը որոշում է նրա կերպարը և թույլ է տալիս գնահատել նրա ուժը կամ թուլությունը: Սույն պարագայում տեղին է համեմատությունն արդի մարզական թիմերի «վիճակ» հասկացության և «լավ վիճակում է գտնվում» արտահայտության միջև: Ընդ որում՝ ինչպես և մարզական թիմի պարագայում, ձևն իմաստ ունի միայն հակառակորդին վերաբերելիս, որի հետ համեմատվելիս դուք հնարավորություն եք ստանում գնահատել սեփական վիճակը: Աբստրակտ ձևը, որ չի համեմատվում հակառակորդի ձևի հետ, իմաստից զրկված է. «Զորքի ձևը նման է ջրին... Ջուրը սահմանում է իր հոսքը տեղից կախված, զորքը սահմանում է իր հաղթանակը հակառակորդից կախված»:

Եթե բանակը գտնվում է լավ վիճակում, ապա այն հաղթում է դեռ մինչև ճակատամարտը, իսկ երբ այդ բանակը մարտնչում է, ապա «դա նման է կուտակված ջրի, որը գահավիժում է հազար սաժեն բարձրությունից դեպի հովիտը: Սա էլ հենց ձևն է»: Բանակի ձևի հասկացությունը մեկ այլ խորքային հասկացության՝ «հզորության» հետևանքն ու դրսևորումն է: Հզորությունը բանակի պոտենցիալի դրսևորումն է, այն ներքին ուժի, որը թաքնված է ձևի հետևում: «Այն, ինչ թույլ է տալիս բուռն հոսանքի արագությանը քարեր քշել, դրա հզորությունն է»: Ինչպես և ձևը, հզորությունը կարող է գնահատվել միայն հակառակորդի համեմատությամբ:

Բացառություններ և փոփոխությունների ու փոխակերպումների օրենքը

Խորհրդածելով պատերազմ վարելու կանոնների մասին՝ Սուն Ցզին նշում է բացառությունների՝ որպես պատերազմի բնույթի վերաբերյալ իր ուսմունքի գլխավոր հասկացության մասին: Օրինակ, կա «ճանապարհ» հասկացությունը, որը նախատեսված է այն բանի համար, որ նրանով քայլեն, սակայն «կան ճանապարհներ, որոնցով չեն քայլում»: Ճանապարհների ընտրության նույն օրինակը բերում է նաև 20-րդ դարի ֆրանսիացի ստրատեգ Լյութվակը՝ ցույց տալով պատերազմի նորմալ և պարադոքսալ տրամաբանության տարբերությունները: Եթե սովորական մարդկային գործունեության մեջ դուք ձեր ընտրությունն, անշուշտ, կանգնեցնում եք որակյալ ճանապարհի վրա, ապա «միայն ռազմավարության կոնֆլիկտային ոլորտում, միայն մարտի պայմաններում է հնարավոր, որ վատ ճանապարհը լավը համարվի միայն այն պատճառով, որ այն վատն է և

դրա համար էլ ուժեղ չի պահպանվում կամ անգամ անպաշտպան է թողնվում հակառակորդի կողմից»: Լյութվակի խոսքերով՝ ռազմավարությունը պարադոքսալ է. «...ռազմավարության ողջ ոլորտն ինքնին համակված է պարադոքսալ տրամաբանությամբ, որը հակասության մեջ է մտնում սովորական գծային տրամաբանության հետ, ըստ որի՝ մենք ապրում ենք կյանքի մնացած բոլոր ոլորտներում (բացի պատերազմին նման խաղերից)»: «...Անհարմար ժամանակին կամ ուղղությանը, ակնհայտ ու միտումնավոր անավարտ պատրաստություններին, չափից ավելի վտանգավոր թվացող մատույցներին, գիշերամարտին կամ վատ եղանակին տրվող պարադոքսալ նախապատվությունը մարտավարական վարպետության ընդհանուր ասպեկտներն են ըստ այն պատճառների, որոնք բխում են պատերազմի անքակտելի բնույթից»:

Ճիշտ նույն կերպ էլ «լինում են բանակներ, որոնք չեն հարձակվում, լինում են ամրոցներ, որոնց համար չեն կռվում, լինում են տեղանքներ, որոնց համար չեն մարտնչում, լինում են տիրակալի հրամաններ, որոնք չեն կատարում»:

Սուն Ցզիի հայտնի հինգ բացառություններն օգնում են հասկանալ նրա ռազմավարության առանցքային կետերը, որոնք կապված են փոփոխությունների ու փոխակերպումների հիմնարար օրենքի հետ: Յուրաքանչյուր երևույթ զարգանում (փոփոխվում) է և հասնելով զարգացման սահմանին՝ վերածվում է իր հակադրությանը, և տեղի է ունենում փոխակերպումը. «անկարգությունը ծնվում է կարգուկանոնից, վախկոտությունը՝ քաջությունից, թուլությունը ծնվում է ուժից»: Փոփոխությունների և փոխակերպումների օրենքը ցիկլիկ է, և հերթական փոխակերպումից հետո կրկին սկսվում է փոփոխությունների գործընթացը, որը կրկին ավարտվում է հերթական փոխակերպմամբ:

Խորհրդածելով զորահրամանատարի արվեստի մասին՝ Սուն Ցզին նշում է, որ վերջինը պետք է տիրապետի «փոփոխություններին և փոխակերպումներին», ինչը ենթադրում է ոչ թե պարզապես սույն օրենքին հետևելը, այլ դրա ուղղորդումն ու օգտագործումը սեփական շահի համար: Այսպիսով, բացի «փոփոխությունները» և «փոխակերպումներն» իմանալը, անհրաժեշտ է նաև տիրապետել դրանց, սովորել ուղղորդել դրանք: Դժվարությունն այն է, որ պատերազմը հակամարտություն է և իրադարձությունների զարգացումը կախված է ոչ միայն քո, այլ նաև հակառակորդի ջանքերից, երբ դու պետք է կատարելապես ճանաչես ոչ միայն քեզ, այլև հակառակորդին, որպեսզի կարողանաս տիրապետել փոփոխությունների

և փոխակերպումների օրենքին: Զարգացման նման մակարդակը բերում է նոր որակի առաջացման, և նման մարդը, զորահրամանատարը դառնում է աստված: «Ով կարողանում է հակառակորդից կախված տիրապետել փոփոխություններին ու փոխակերպումներին և հաղթանակ տանել, նա աստված է կոչվում»:

Հարձակումը և պաշտպանությունը պատերազմում Փոփոխությունների և փոխակերպումների օրենքի պրիզմայի միջով

Հակամարտող կողմերի գործողություններն են հարձակումը և պաշտպանությունը: Ինչպես արդեն վերն ասել ենք, պաշտպանությունը ուժի այն դիրքն է, երբ բացառվում է հակառակորդի հաղթանակը, սակայն այն նաև թուլության նշան է, քանի որ այդ դրության մեջ դու ի վիճակի չես հաղթանակ տանել: Հարձակումն իր ուժն ունի, որը նաև քո թուլությամբ հաղթելու հնարավորությունն է, քանի որ հաղթանակը կախված է հակառակորդի դրությունից, որը պետք է հնարավորություն ընձեռի անել այդ: Դրանով իսկ պաշտպանությունը և հարձակումը նույնպես փոխկապակցված են և ենթարկվում են փոփոխությունների և փոխակերպումների օրենքին: Լի Վեյ Գունը նշում է. «Հարձակումը պաշտպանության մեխանիզմ է, պաշտպանությունը հարձակման գործիք է: Եթե հարձակվես չպաշտպանվելով և չպաշտպանվես՝ հարձակվելով, նշանակում է ոչ միայն այս երկու գործողությունները տարբեր բաներ համարել, այլ նաև դրանցում ըստ էության երկու տարբեր գործողություններ տեսնել: Նման մարդիկ կարող են լեզվով որքան ուզում է պնդել Սուն Ցզիի և Ու Ցզիի մասին, բայց խելքով չեն հասկանում նրանց խորությունը»:

Ձևի կատեգորիայի պրիզմայի միջով

Ռազմավարական հարձակումը կառուցվում է ձևի կատեգորիայի գործառնության հիմքի վրա, որը, փաստորեն, նշանակում է կառավարում սեփական ուժեղ և թույլ կողմերով: Սուն Ցզին պահանջում է, որ ձևը չճանաչվի հակառակորդի կողմից, այսինքն՝ սեփական պոտենցիալը թաքուն մնա հակառակորդի համար: «Ուստի, զորքին ձև տալու սահմանն այն է, որ հասնես նրան, որ ձև չլինի»: «Երբ ձև չկա, անգամ շատ խորքերը թափանցած հետախույզը չի կարողանա ինչ-որ բան հոտոտել, անգամ իմաստունը չի կարողանա ինչ-որ բանի մասին դատել»: Հակառակորդը պետք է տեսնի

այն ձևը, որը դրանով իսկ գործիք է դառնում, ռազմավարական հարձակման գործիք: Նման եզրակացության է գալիս նաև իսրայելցի ստրատեգ Վան Կրևելդը, ով ասում է, որ ռազմավարության բուն էությունը «...(հակառակորդի) ուշադրությունը շեղելն է, խաբելն ու մոլորության մեջ գցելը»:

Շահի և վնասի կառավարման պրիզմայի միջով

Ռազմավարական հարձակման մեկ այլ գործիք է շահի և վնասի կառավարումը: «Երբ հակառակորդին ինչ-որ բան են տալիս, նա անպայման վերցնում է. շահով նրան ստիպում են շարժվել, բայց դիմավորում են անսպասելիությամբ»: Շահը և վնասը որոշում են կռվող կողմերից յուրաքանչյուրի գործողությունները, երբ ջանում են շահ ձեռք բերել իրենց համար և վնաս պատճառել հակառակորդին: Կարելի է հաղթանակի հասնել՝ հակառակորդին գայթակղելով կարճաժամկետ շահով կամ խոչընդոտներ ստեղծելով, որոնք միասին նրան պարտության են մատնում: «Կարողանալ ստիպել հակառակորդին, որ ինքը գա, նշանակում է՝ նրան գայթակղել շահով. կարողանալ հակառակորդին չթողնել, որ անցնի, նշանակում է՝ զսպել նրան վնասով»: Ուրեմն, շահը ոչ միայն պատերազմի նպատակն ու չափանիշն է, ինչի մասին վերը նշեցինք, այլև միջոցը: Ընդ որում՝ շահը կապված է հակառակորդի հետ, որը ցանկացած հակամարտության անքակտելի մասն է: Քանի որ հակառակորդը նույնպես մարտնչում է հանուն շահի, ինչը նրա նպատակն է, ապա շահով մանիպուլացնելով (կառավարելով)՝ մենք կարող ենք ազդել նրա քայլերի վրա: Դրանով իսկ հակառակորդի նպատակը վերածվում է միջոցի մեզ համար:

Նախաձեռնության կառավարման պրիզմայի միջով

Պատերազմ մղելու հիմնական կանոնը Սուն Ցզին սահմանում է հետևյալ կերպ. «Նա, ով լավ է կռվում, կառավարում է հակառակորդին և չի թողնում նրան կառավարել իրեն»: Այլ խոսքերով՝ ռազմավարական նախաձեռնությունը պետք է լինի ձեր ձեռքում, և հենց դուք պետք է թելադրեք պայքարի պայմաններն ու ձևերը: Նման կարծիքի են նաև արևմտյան ստրատեգները՝ Կլաուզևիցից մինչև մեր օրերը: Բոլոր ռազմական տեսաբանները միակարծիք են այն հարցում, որ ռազմավարական նախաձեռնությունը պահելը, իրավիճակը վերահսկելը պատերազմի խիստ կարևոր տարրն են: Այս մասին գրում է, մասնավորապես, ծովակալ Ուայլին (ԱՄՆ).

«Պատերազմ վարելիս ստրատեգիստի գլխավոր նպատակն է, որոշ աստիճանով, սեփական նպատակներով հակառակորդի կառավարումը»:

Ռազմավարական նախաձեռնությանը տիրելու և հակառակորդին այն անել տալու համար, ինչն անհրաժեշտ է քեզ, Սուն Ցզին խորհուրդ է տալիս տիրել նրան, ինչ թանկ է նրա համար. «Առաջինը նվաճիր այն, ինչը թանկ է նրա համար: Եթե նվաճես, նա հնազանդ կլինի քեզ»: Մեզ համար դա, փաստորեն, Հայկական բարձրավանդակն է և նրա սրբազան վայրերը: Սրան կարելի է վերագրել նաև հետևյալ խորհուրդն ու հնարքը. «հարձակվիր նրա վրա, ինչը հակառակորդը չի կարող պաշտպանել»:

Հակառակորդին կառավարելու հաջորդ եղանակը ռազմավարական հանկարծակիության օգտագործումն է, «այն ճանապարհով գնալը, որի մասին նա նույնիսկ չի էլ մտածում»: Նպատակը հակառակորդին շոկի և մոլորության մեջ գցելն է. «Հարձակվել և միաժամանակ հաստատ վերցնել, նշանակում է՝ հարձակվել հենց այնտեղ, որտեղ նա չի պաշտպանվում. պաշտպանել և միևնույն ժամանակ հաստատ պահել, նշանակում է՝ պաշտպանել այն տեղը, որի վրա նա չի կարող հարձակվել: Ուստի, նրանից, ով կարողանում է հարձակվել, հակառակորդը չգիտե որտեղ պաշտպանվել, նրա վրա, ով կարողանում է պաշտպանվել, հակառակորդը չգիտե որտեղ հարձակվել»: Դրա համար անհրաժեշտ է հետևել նրան և որսալ հարմար պահը, երբ նա կբացվի ու խոցելի կդառնա. «Երբ հակառակորդը սկսի բացվել ու փակվել, անպայման սրընթաց հարձակվիր նրա վրա»: Զորահրամանատարը, որ ի վիճակի է հասնել դրան, հանճարեղ է և «հակառակորդի ճակատագրի տիրակալն է»:

Հարձակման սրընթացությունը

Սուն Ցզին առաջնակարգ նշանակություն է տալիս նաև հասցվող հարվածի արագությանն ու սրընթացությանը, որը պետք է լինի հաշվարկված, կարճ, ջախջախիչ և հասցվի «ավելի արագ, քան որոտի ձայնն է հասնում մարդու ականջին, ավելի արագ, քան կայծակի փայլն է հասնում աչքին»:

Հարվածի սրընթացությունը կախված է բանակի հզորությունից, որն իր հերթին կախված է արագությունից: «Այն, ինչ թույլ է տալիս բուռն հոսանքին քշել քարերը, հզորությունն է... Նա, ով լավ է մարտնչում, նրա հզորությունը սրընթաց է»: Այլ խոսքերով՝ ջախջախիչ հարվածը պետք է դառնա բանակի օբյեկտիվ և բնական հզորության, բայց ոչ հատուկ ջանքերի, արտաքին գործողությունների հետևանքը: «Ուստի, նրա հզորու-

թյունը, ով կկարողանա ստիպել մյուսներին մարտի գնալ, այն մարդու հզորությունն է, ով գլորում է կլոր քարը սարից հազար սաժեն»: Եթե հարվածը ներքին հզորության հետևանք է, միայն այդ դեպքում այն կկարողանա ջախջախիչ ուժ ունենալ:

Այսպիսով, կարճ անդրադարձը ռազմավարությանը ցույց է տալիս, որ ռազմական ու ռազմավարական մշակույթի հարթությունում նոր գաղափարներ գոյություն չունեն և ստրատեգիստի առջև բացվում է գաղափարների համաշխարհային գանձարանը, որում կուտակված է պատերազմի տեսաբանների և պրակտիկների նախորդ սերունդների հազարամյա փորձը: Ժողովրդի մտավոր ընտրանին, ձևավորելով արդիականությանը համահունչ դոկտրիններ և հայեցակարգեր, դիմում է նախորդ սերունդներին՝ գաղափարների և սահմանումների համար, որոնք այնուհետև մեկնաբանվում և ձևակերպվում են նոր դարաշրջանի լեզվով ու առկա հասարակական ձևերի շրջանակներում: Ընտրանու թերհասությունն ու մանկամտությունը հանգեցնում են նրան, որ հասարակությունը հանկարծակիի է գալիս՝ բախվելով նոր, թափ ու կշիռ հավաքող գաղափարների, ինչը հանգեցնում է նրա անհամարժեքությանը և, լավագույն դեպքում, ժամանակավոր կաթվածի: Վերջին հարյուրամյակների ընթացքում Հայությունը ճակատագրականորեն ուշանում էր նոր միտումներն ու գաղափարներն ընկալելու հարցում, որոնք այնուհետև դառնում էին նոր ժամանակների շարժիչ ուժերը: Ինչպես ժամանակին նշել է Հայկ Ասատրյանը, հայը՝ որպես մտածող, ինտելեկտուալ, վաղուց դարձել է հետևող՝ հետևելով մաշված, սպառված ճշմարտությունների: Հայ մտածողության համար գարունը գալիս է այն ժամանակ, երբ Եվրոպայում ուշ ամառ է և բերքն արդեն հավաքված է: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Հայության հոգևոր, մտավոր և քաղաքական էլիտայի հենց այս հետամնացության մեջ է թաքնված 20-րդ դարասկզբի աղետի պատճառներից մեկը: Գաղափարների և հիմնարար հասկացությունների աշխարհը պետք է գտնվի հասարակության և նրա ընտրանու սևեռուն ուշադրության կենտրոնում, քանզի չյուրացված կամ չհասկացված գաղափարներն ու միտումները հասարակությունը խոցելի են դարձնում դրանց առջև:

«ԳԼՈԲՈՒՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԱՄՍԱԳԻՐ
Խմբագրական խորհուրդ

Հայաստանի Հանրապետություն, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 49, + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Էլեկտրոնային շարվածքը՝ Դիանա Գալստյանի
Հանձնված է տպարան 11.03.2009թ.
Հիմնադիր՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ

Ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 15 մամուլ: Տպաքանակը՝ 200:
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում